



Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին» 2015 թվականի ծրագրի իրականացման համար ՀՀ 2015թ.-ի ընթացքում պետական բյուջեից ուղղվել է **152,300,000 ՀՀ դրամ**:

Հաշվետու ժամանակահատվածում ՓՄՁ պետական աջակցության 2015 թվականի ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության, ոլորտային աջակցության, գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցության, տեղական տնտեսական զարգացման ուղղություններով շուրջ 6000 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների **տրամադրվել է 13,194 աջակցություն**:

Տրամադրված աջակցության ուղղություն	2015 թվականի ընթացքում տրամադրված աջակցության քանակ
Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն	403
Ուսուցողական աջակցություն	407
Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն, այդ թվում՝ հաշվապահական հաշվառման համաֆինանսավորման ծրագիր	11857
Սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում	176
ՓՄՁ միջազգայնացում, ներառյալ ՁԵՑ գործունեության շրջանակներում	259
Ոլորտային բիզնեսներին աջակցություն տեխնոլոգիական խորհրդատվությունների տրամադրման ուղղությամբ	67
Ոլորտային աջակցության ծրագրի շրջանակներում դրամաշնորհների տրամադրում	25
Ընդամենը	13194
Տեղական տնտեսական զարգացման ծրագիր (ընդգրկված համայնքների քանակ)	10 (35)
Այլ ծրագրեր	
Իրացված գյուղտեխնիկայի քանակ	26
Նոր սերնդի ՀԴՄ-ների արժեքի փոխհատուցման ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներ	611

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 5.1%-ը գործում են Երևան քաղաքում, իսկ 94.9%-ը ՀՀ մարզերում՝ առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից տրամադրված աջակցության մարզային բաշխվածքը հետևյալն է. Արագածոտնի մարզում՝ 1239, Արարատի մարզում՝ 1237, Արմավիրի մարզում՝ 527, Գեղարքունիքի մարզում՝ 885, Լոռու մարզում՝ 2993, Կոտայքի

մարզում՝ 1723, Շիրակի մարզում՝ 838, Սյունիքի մարզում՝ 630, Վայոց Ձորի մարզում՝ 1297, Տավուշի մարզում՝ 1150, Երևան քաղաքում՝ 675 (Հավելված 1):

2015թ.-ի ընթացքում Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից իրականացված աշխատանքները, ըստ առանձին ուղղությունների և աջակցության ծրագրերի, ներկայացված են ստորև.

1. ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են իրականացվել Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի նյութատեխնիկական ապահովվածության մակարդակի բարձրացման, մարզային մասնաճյուղերի աշխատակիցների մասնագիտական հմտությունների զարգացման ուղղությամբ:

ՓՄՁ պետական աջակցության ծրագրային ուղղություններով նախատեսված միջոցառումների ընդլայնման և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման նպատակով Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ը շարունակել է համատեղ ծրագրեր մշակել և իրականացնել մի շարք միջազգային կազմակերպությունների հետ, ինչպես նաև համագործակցություն է հաստատել նոր կազմակերպությունների հետ:

Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի մարզային մասնաճյուղերի և կենտրոնական գրասենյակի աշխատակիցները մասնակցել են Հայաստանի Հանրապետությունում և արտերկրներում կազմակերպված մի շարք դասընթացների, համաժողովների և հանդիպումների:

ԵՄ «Ձեռնարկությունների և փոքր և միջին ձեռնարկությունների մրցունակություն» (Competitiveness of Enterprises and Small and Medium-sized Enterprises (COSME, 2014 to 2020)) ծրագրի շրջանակներում Եվրոպական Հանձնաժողովի կողմից հայտարարված ՁԵՑ-ի 2015-2020թթ. համակարգում ընգրկվելու մրցույթին Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ը ս.թ. հունվարի 29-ին ներկայացրել է ծրագրային առաջարկ: Մրցույթի արդյունքում ներկայացված հայտը գնահատվել է դրական և ուժի մեջ կմտնի COSME-ի համաձայնագրի ստորագրման պահից, ինչը հնարավորություն կտա Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ին համաֆինանսավորում ստանալ ՁԵՑ-ի գործունեության շրջանակներում՝ էականորեն բարձրացնելով Հայաստանում վերջինիս գործունեության արդյունավետությունը: Ներկայումս Հայաստանը ՁԵՑ-ին անդամակցում է որպես երրորդ երկիր, որի գործունեությունը չի համաֆինանսավորվում ԵՄ կողմից:

2015 թ. ապրիլի 29-ին փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ հիմնադրամի և PUM ավագ փորձագետների Նիդերլանդական հիմնադրամի միջև՝ հետագա գործակցության վերաբերյալ: Հուշագրի համաձայն՝ PUM կազմակերպությունը Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի հետ համատեղ Հայաստանում նպաստելու է ՓՄՁ զարգացմանը՝ եվրոպացի փորձառու մասնագետների գիտելիքներն ու փորձը Հայաստանում տարածելու ճանապարհով: Փորձագիտական աջակցություն է տրամադրվելու չրագործության, պանրագործության, մսի վերամշակման և ընտրված այլ ոլորտների ՓՄՁ սուբյեկտներին:

«Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) և Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ հիմնադրամների միջև ս.թ. հունիսի 18-ին փոխըմբռնման և համագործակցության մասին հուշագիր ստորագրվեց, որի նպատակը Տաթևում և Դիլիջանում, ինչպես նաև հարակից համայնքներում ձեռնարկատիրության խթանմանն աջակցությունն է:

Հուշագրով կողմերը պատրաստակամություն են հայտնում մասնավորապես համագործակցել «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության» ծրագրի շրջանակներում, ինչը վերոնշյալ տարածաշրջաններում փոքր ձեռնարկատիրության զարգացման համար համապարփակ աջակցություն է նախատեսում:

Ս.թ. մայիսի 25-ին Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի և Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Հայաստան) միջև ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր, համաձայն որի համատեղ ջանքերով երկու կազմակերպությունները աջակցելու են ՀՀ Սյունիքի մարզի Տաթև և հարակից Տանձատափ, Սվարանց համայնքներում եկամտի աղբյուրների դիվերսիֆիկացմանը:

Սույն թվականի հուլիսի 27-ին համագործակցության հուշագիր է ստորագրվել ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության «Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջնություն» ծրագրի և Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի միջև: Կողմերը համաձայնվեցին համագործակցել ՀՀ Կոտայքի մարզի Բջնի համայնքում գյուղական տուրիզմի զարգացման պիլոտային ծրագրի իրականացման շուրջ: Ծրագիր նախատեսում է ուսումնասիրություններ, դասընթացներ, տեղի ՓՄՁ-ների կարողությունների զարգացման բազմաթիվ միջոցառումներ, այդ թվում՝ ֆինանսական աջակցություն: Համագործակցության շրջանակներում ֆինանսական աջակցությունը կտրամադրվի Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կողմից վարկային երաշխավորությունների ձևով այն սկսնակ գործարարներին, որոնց գործարար ծրագրերը, ըստ Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի գործող ընթացակարգերի, կճանաչվեն առավել իրատեսական:

«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2015 թվականի ծրագրով «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:

2. ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում)

2.1 Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն

«Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի նպատակն է մրցունակ ՓՄՁ-ների հիմնումը Հայաստանում: Ծրագիրը ներառում է ուսուցողական, մասնագիտական խորհրդատվության, տեղեկատվական, ինչպես նաև ֆինանսական աջակցության տրամադրման բաղադրիչներ: Մասնակցելով ծրագրին՝ սկսնակ գործարարները ստանում են բիզնեսի պլանավորման, շուկայավարման, կառավարման, արտադրության և ֆինանսների պլանավորման գիտելիքներ և համապատասխան

գործարար հմտություններ: Ծրագրի դասընթացային փուլի տևողությունը 1 ամիս է, որի ընթացքում փորձառու մասնագետների ուղղորդմամբ սկսնակ գործարարները նախ մշակում են իրենց անհատական գործարար ծրագրերը, որից հետո ձեռնամուխ են լինում դրանց իրականացմանը: Այս ծրագիրն ավելին է քան գործարար ծրագիր մշակելը, այն գործարար մտածողության և վարքագծի հիմնարար սկզբունքները սահմանող գործիքակազմ է: Ծրագիրը սկսվում է ձեռնարկատիրության հաջող մեկնարկի համար անհրաժեշտ հմտությունների զարգացմամբ և գիտելիքների փոխանցմամբ՝ գործարար ծրագրեր ներկայացնելու տրամաբանական ավարտով:

Գաղափարն իրագործելու ընթացքում գործարարները միայնակ չեն. դասընթացային փուլին հաջորդող 6 ամիսների ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի փորձագետները և բիզնես խորհրդատուները ուղեկցում են սկսնակ գործարարներին անհատական խորհրդատվությունների միջոցով և լրացուցիչ աջակցություն տրամադրում՝ կարիքներից ելնելով:

Հաշվետու ժամանակահատվածում մեկնարկել և ընթացքի մեջ է 23 ծրագիր¹ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան և Ճամբարակ, Տավուշի մարզի Դիլիջան և Նոյեմբերյան, Շիրակի մարզի Գյումրի և Արթիկ, Լոռու մարզի Վանաձոր և Ստեփանավան, Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր և Ջերմուկ, Արարատի մարզի Արտաշատ, Արմավիրի մարզի Արմավիր, Սյունիքի մարզի Կապան, Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքներում, Կոտայքի մարզի Նոր Գեղի, Գառնի և Բջնի, Լոռու մարզի Գյուլագարակ, Սյունիքի մարզի Տաթև գյուղերում և 4 ծրագիր՝ Երևանում (որից 3-ը՝ սիրիահայերի համար նախատեսված): Ընդհանուր առմամբ 23 իրականացված ծրագրերին մասնակցելու համար դիմել է 796 սկսնակ գործարար, որոնցից հարցազրույցների արդյունքում ընտրվել և մասնակցել է ծրագրերին 403-ը, որից 159-ը՝ կին, 244-ը՝ տղամարդ (Հավելված 2.1):

Մարզ քաղաք/գյուղ	Մասնակիցների թիվ	Դասընթացի սկիզբ/ավարտ	Ներկայացված գործարար ծրագրերի թիվ	Հաստատված գործարար ծրագրերի թիվ
Գեղարքունիք/Սևան	16	17.03.2015-05.05.2015	15	11
Գեղարքունիք/Ճամբարակ	15	28.04.2015-13.06.2015	15	10
Տավուշ/Դիլիջան	22	26.02.2015-30.03.2015	13	9

¹ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան և Ճամբարակ, Արմավիրի մարզի Արմավիր, Տավուշի մարզի Նոյեմբերյան, Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքներում, ինչպես նաև Լոռու մարզի Գյուլագարակ, Կոտայքի մարզի Նոր Գեղի և Սյունիքի մարզի Տաթև գյուղերում ծրագրերն իրականացվել են ԱՄՆ ՄՁԳ-ի «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID PRP) համատեղ ծրագրի շրջանակներում: ՀՀ Լոռու մարզի Վանաձոր և Ստեփանավան, Շիրակի մարզի Գյումրի և Արթիկ, ինչպես նաև Տավուշի մարզի Դիլիջան քաղաքներում ծրագրերն իրականացվել են ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) «Արդյունավետ աշխատանք Հայաստանում երիտասարդների համար. երիտասարդ ձեռներեցիներին աջակցություն» համատեղ ծրագրի շրջանակներում: ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր, Արարատի մարզի Արտաշատ, Սյունիքի մարզի Կապան և Երևան քաղաքներում ծրագրերն իրականացվել են Ասիական զարգացման բանկի (ADB) հետ համատեղ «Կանանց ձեռներեցության զարգացում» ծրագրի շրջանակներում: Երևանում 3 ծրագիր սիրիահայերի համար իրականացվել է ՄԱԿ-ի Փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի գրասենյակի (UNHCR) հետ համատեղ ծրագրի շրջանակներում: ՀՀ Կոտայքի մարզի Գառնի և Բջնի գյուղերում և Վայոց Ձորի մարզի Ջերմուկ քաղաքում ծրագրերն իրականացվել են Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) հետ համատեղ ծրագրի շրջանակներում:

Տավուշ/Նոյեմբերյան	15	28.07.2015- 07.09.2015	15	8
Շիրակ/Գյումրի	22	04.03.2015- 17.04.2015	21	15
Շիրակ/Արթիկ	18	16.04.2015- 26.05.2015	16	10
Լոռի/Վանաձոր	14	23.02.2015- 01.04.2015	13	10
Լոռի/Գյուլագարակ	11	12.06.2015- 11.07.2015	8	3
Լոռի/Ստեփանավան	15	05.10.2015- 11.11.2015	14	7
Վայոց Ձոր/Եղեգնաձոր	28	10.03.2015- 20.04.2015	25	21
Վայոց Ձոր/Ջերմուկ	13	13.10.2015- 25.11.2015	12	8
Արարատ/Արտաշատ	15	30.04.2015- 04.06.2015	15	11
Արմավիր/Արմավիր	21	25.05.2015- 14.07.2015	19	15
Սյունիք/Կապան	20	10.06.2015- 15.07.2015	20	9
Կոտայք/Նոր Գեղի	18	22.04.2015- 03.06.2015	13	9
Կոտայք/Գառնի	19	10.06.2015- 17.07.2015	15	9
Կոտայք/Բջնի	16	19.09.2015- 09.11.2015	14	6
Արագածոտն/Աշտարակ	15	24.06.2015- 04.08.2015	15	10
Երևան	30	05.02.2015- 19.03.2015	29	22
Երևան/սիրիահայեր	17	27.04.2015- 15.06.2015	13	10
Երևան/սիրիահայեր	16	11.08.2015- 07.10.2015	8	5
Երևան/սիրիահայեր	15	23.11.2015- 28.12.2015	11	-
Սյունիք/Տաթև	12	24.11.2015- 29.12.2015	12	-

Հաշվետու ժամանակահատվածում 403 մասնակիցներից 351-ը կազմել և ներկայացրել են գործարար ծրագրեր, որոնցից 218-ը ծրագրի գնահատման աշխատանքային խմբի կողմից արժանացել են ֆինանսական աջակցություն ստանալու հավանության:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականին իրականացված ծրագրերի շրջանակներում ձեռնարկատիրական գործունեություն է ծավալում 141 սկսնակ գործարար, որոնք ապահովում են 189 աշխատատեղ: Գործող բիզնեսների բաշխվածքն ըստ գործունեության ոլորտների հետևյալն է. արտադրության ոլորտում՝ 45%, ծառայությունների ոլորտում՝ 48%, առևտրի ոլորտում՝ 7%: 141 գործող բիզնեսներից 231-ը գրանցվել են որպես անհատ ձեռնարկատեր, իսկ 22-ը՝ որպես առևտրային իրավաբանական անձ (*Հավելված 2.2*):

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի իրականացման արդյունքում գրանցվել է 132 ՓՄՁ սուբյեկտ, որոնցից 33-ը՝ 2014 թվականին իրականացված ծրագրերի մասնակիցներն են, իսկ 99-ը՝ 2015 թվականին: Գրանցված 132 ՓՄՁ սուբյեկտներից 118-ը գրանցվել են որպես անհատ ձեռնարկատեր, իսկ 14-ը՝ որպես առևտրային իրավաբանական անձ: Պետական գրանցում ստացած սկսնակ գործարարների բաշխվածքն ըստ գործունեության ոլորտների հետևյալն է. արտադրության ոլորտում՝ 42%, ծառայությունների ոլորտում՝ 52%, առևտրի ոլորտում՝ 6%: 2015թ. ընթացքում գրանցված 132 ՓՄՁ սուբյեկտները ապահովում են 155 աշխատատեղ, որից 114-ը հանդիսանում են ինքնազբաղված, իսկ 18-ը ստեղծել են հավելյալ 23 աշխատատեղ (*Հավելված 2.3*):

2.2 ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական աջակցություն

Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի, Զբաղվածության պետական գործակալության և Հայաստանում Ֆրանսիայի իմիգրացայի և ինտեգրման գրասենյակի հետ համատեղ իրականացվող «Ինքնազբաղվածության խթանման նպատակով փոքր ձեռնարկատիրության աջակցություն» ծրագրի շրջանակներում Զբաղվածության պետական գործակալության կողմից ՀՀ մարզերից և Երևան քաղաքից ս.թ. փետրվարի 2-20-ը ուղղորդված 39 անձանց և սեպտեմբերի 4-25-ը ուղղորդված 20 անձանց, ինչպես նաև նոյեմբերի 2-ից դեկտեմբերի 15-ը ուղղորդված 23 անձանց համար կազմակերպվել են դասընթաց/խորհրդատվություններ «Գործարար ծրագրի կազմում» թեմայով: Դասընթացի արդյունքում մասնակիցները Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի մարզային մասնաճյուղերի և կենտրոնական գրասենյակի փորձագետների օգնությամբ կազմել են գործարար ծրագրեր ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով (*Հավելված 2.4*):

Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի և Նիդերլանդների ավագ փորձագետների «PUM» կազմակերպության հետ համատեղ ծրագրի շրջանակներում ս.թ. փետրվարի 16-ին Լոռու մարզի 12 հյուրատնային գործունեությամբ զբաղվող գործարարների համար կազմակերպվել է երկօրյա դասընթաց և անհատական խորհրդատվություն հոլանդացի փորձառու մասնագետի գլխավորությամբ ու փորձը Հայաստանում տարածելու նպատակով: Դասընթացին, որն անց է կացրել հոլանդացի փորձագետ Բրամ դե Սուինկը, հաջորդել է հյուրատներից յուրաքանչյուրի համար հյուրատնային գործունեության վերաբերյալ մեկօրյա անհատական խորհրդատվություն՝ հյուրընկալության, անհրաժեշտ միջազգային չափանիշների, մարքեթինգի և վաճառքի առանձնահատկությունների, այցելուների ներգրավման, սոցիալական ցանցերի օգտագործման կարևորության, այլ կառույցների հետ համագործակցության, ինչպես նաև հյուրատների զարգացմանը նպաստող այլ թեմաների շուրջ: Նույն ծրագրի շրջանակներում ս.թ. հուլիսի 13-ից 22-ը Տավուշի մարզի Դիլիջան և Իջևան քաղաքներում գործող հյուրատնային գործունեությամբ զբաղվող 10

գործարարների համար կազմակերպվել է դասընթաց և անհատական խորհրդատվություն: Բացի այդ, ս.թ. հուլիսի 23-ից 25-ը հոլանդացի փորձագետը հետդասընթացային այց է կատարել Լոռու մարզ և հանդիպել հյուրատնային գործունեությամբ զբաղվող 8 գործարարների հետ, ուսումնասիրել նախորդ այցելությունից հետո կատարված փոփոխությունները, գնահատել ներկա իրավիճակը և քննարկել զարգացման առաջիկա միտումները (*Հավելված 2.4*):

«Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջնորդում» Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ/ՃՄՀԳ համատեղ ծրագրի շրջանակներում ս.թ. նոյեմբերի 3-4-ը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի և գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների 21 ներկայացուցիչների համար անց է կացվել դասընթացավարների «Կայզեն գործիքներ, շարունակական բարելավում» և «Ապրանքանշում և շուկայավարում ՓՄՁ-ների համար» թեմաներով դասընթացի շարունակությունը (Follow up session):

Աջակցություն սիրիահայերին և փախստականներին

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը շարունակում է տրամադրել աջակցություն սիրիահայ գործարարներին ՄԱԿ-ի Փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի (ՄԱԿ ՓՀԳ) աջակցությամբ իրականացվող «Կենսապահովության և ինքնաբավության բարելավում ֆինանսական և արտադրական ծառայությունների մատչելիության խթանման միջոցով» համատեղ ծրագրի շրջանակներում: Աջակցություն է տրամադրվում ուսուցողական, խորհրդատվական, տեղեկատվական և ֆինանսական միջոցների հասանելիության ապահովման ուղղություններով:

Հաշվետու ժամանակահատվածում ՄԱԿ ՓՀԳ-ի և Հայկական կարմիր խաչի ընկերության հետ համատեղ «Եկամտաբեր գործունեության խթանում» ծրագրի շրջանակներում ս.թ. փետրվարի 26-ին և 27-ին կազմակերպվել է երկու մեկօրյա դասընթաց, որոնց մասնակցել են 30 սիրիահայ և փախստական գործարարներ: Դասընթացը ներառել է հետևյալ հիմնական թեմաները՝ ձեռնարկատիրական գործունեությունը Հայաստանում, մարքեթինգ, կառավարում, բիզնես պլանավորում, ՀՀ հարկային օրենսդրություն: Մինևույն ծրագրի շրջանակներում ս.թ. օգոստոսի 3-ին և 4-ին, ինչպես նաև հոկտեմբերի 16-ին (2 դասընթաց) և նոյեմբերի 5-ին կազմակերպվել է «Մարքեթինգային ռազմավարություն և վաճառքի հմտություններ» թեմայով հինգ մեկօրյա դասընթաց, որոնց մասնակցել է 93 սիրիահայ գործարար և փախստական: Դասընթացի հիմնական թեմաներն էին. մարքեթինգային ռազմավարությունը և ուսումնասիրությունը, շուկայի սեգմենտավորումը, մրցակցային առավելությունը, արդյունավետ վաճառքի գործընթացների կազմակերպման առանձնահատկությունները, վճարովի և անվճար մարքեթինգային գործիքները, բիզնեսի կազմակերպման և պլանավորման ընդհանուր դրույթները, Հայաստանում ձեռնարկատիրական գործունեությունը (*Հավելված 2.4*):

Ծրագրի շրջանակներում մարտի 12-ին կազմակերպվել է «Մասնակցային գնահատում» թեմայով աշխատանքային հանդիպում սիրիահայ գործարարների հետ: Հանդիպմանը մասնակցեցին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի, ՄԱԿ-ի ՓՀԳ-ի և Հայկական կարմիր խաչի ընկերության ներկայացուցիչները, որոնք պատասխանեցին

գործարարներին հուզող հարցերին, ինչպես նաև ներկայացրեցին սիրիահայ գործարարներին ուղղված աջակցության նոր ծրագրեր:

Սիրիահայերի և փախստականների համար իրականացվել է «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» երեք ծրագիր, որին մասնակցել է 48 սկսնակ գործարար: Ծրագրի արդյունքում մշակված լավագույն և իրատեսական գործարար ծրագրերը կներկայացվեն ֆինանսավորման սկսնակ գործարարների ֆինանսական աջակցության ծրագրի շրջանակներում (*Հավելված 2.1*):

ՄԱԿ ՓՀԳ-ի հետ համագործակցության շրջանակներում մայիսի 15-ին կազմակերպվել է «Սննդի անվտանգության հիմնախնդիրները» թեմայով դասընթաց/գործարար հանդիպում, որին մասնակցել է հանրային սննդի ոլորտում գործող 21 սիրիահայ գործարար: Դասընթացավար՝ սննդի անվտանգության գծով Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) խորհրդատու Արա Կարապետյանը, մասնակիցներին ներկայացրել է Հայաստանում գործող սննդի անվտանգության արդիական կառավարման համակարգը (GMP/GH P, # ACCP, SIIIIISIIII), սննդի արտադրության ոլորտի պահանջները, արտադրամասի և անձնակազմի հիգիենան, թափոնների կառավարումը և այլ հարցեր, ինչպես նաև տրամադրել ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից մշակված «Հանրային սննդի հաստատություններում վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի ներդրման» ուղեցույց (*Հավելված 2.4*):

Ծրագրի շրջանակներում հուլիսի 3-ին և 6-ին կազմակերպվել են մեկօրյա տեղեկատվական հանդիպումներ սիրիահայ գործարարների համար՝ Հայաստանում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող աջակցության ծրագրերի և ՀՀ հարկային օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների վերաբերյալ: Հանդիպումներին, որոնց մասնակցել է 41 սիրիահայ գործարար, ներկա էին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի, Հայկական Կարմիր Խաչի Ընկերության, Առաքելություն Հայաստան և Հայկական Կարիտաս Հասարակական Կազմակերպությունների, ԿԱԶԱ Շվեյցարական Մարդասիրական հիմնադրամի, Հիպեր Սպեյս ՍՊԸ-ի և այլ կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնք պատասխանեցին ներկայացված հարցերին: Բացի այդ, հանդիպումների շրջանակներում մասնակիցների համար կազմակերպվեց նաև դասընթաց ՀՀ հարկային օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ, որտեղ քննարկվեցին «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները և ընտանեկան ձեռնարկատիրության հարկման առանձնահատկությունները (*Հավելված 2.4*):

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ՄԱԿ ՓՀԳ-ի հետ համատեղ ծրագրի շրջանակներում սեպտեմբերի 18-20-ը հնարավորություն ընձեռեց 4 սիրիահայ մասնակիցներին՝ Շանթ Խայալեանին («Բյուրի Պրոդաքթս» ՍՊԸ), Անդրանիկ Սաֆարին («ԱՎԱ Շուգ» ՍՊԸ), անհատ ձեռներեց Հովհաննես Աշճյանին և Հարութ Գասպարին («ԱՅ Պլաստ» ՍՊԸ) մասնակցել և ներկայացնել իրենց արտադրանքը LOGOS EXPO Center ցուցահանդեսային ընկերության և Հայաստանի Արդյունաբերողների և Գործարարների (Գործատուների) միության կողմից կազմակերպված «Armenia EXPO 2015» 15-րդ միջազգային ունիվերսալ առևտրաարդյունաբերական ցուցահանդեսային ֆորումին, որի հիմնական նպատակն էր՝ ապրանքների, ծառայությունների ներկայացումը և նոր գործնական հարաբերությունների հաստատումը: Այն հանդիսանում է խոշորագույն միջոցառում, որն իր հարկի տակ էր հավաքել տնտեսության տարբեր ճյուղերը ներկայացնող 100-ից ավելի

կազմակերպություններ: Յուցահանդեսի ավարտին սիրիահայ մասնակիցներին տրամադրվեցին մասնակցությունը հավաստող վկայականներ:

Նույն ծրագրի շրջանակներում սեպտեմբերի 26-ին կայացավ «Գյուղական կյանք և ավանդույթներ» բերքի փառատոն, որին հաջողությամբ ներկայացած 5 սիրիահայ մասնակիցների խումբը՝ (Անի Արտինիան, Յուլանդ Ռշդունի, Ջորջ Տաբաքյան, Ազնիվ Գյուլյումջյան, Անգել Դարդեան), որպես լավագույն տաղավար արժանացավ մրցանակի՝ չրի պատրաստման սարքի:

Հոկտեմբերի 2-4-ը սիրիահայ գործարար «Խնկիկյան Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի տնօրեն Շանթ Խնկիկյանը մասնակցել է Դիջիթեք Էքսպո բարձր տեխնոլոգիաների (ԲՏ) ցուցահանդեսին, որն անց էր կացվում ՀՀ Կառավարության հովանու ներքո: Այն հանդիսանում է տարածաշրջանի խոշորագույն տեխնոլոգիական ցուցահանդես, որի հիմնական նպատակն է ստեղծել հաղորդակցման բարենպաստ միջավայր բարձր տեխնոլոգիաների ընկերությունների, գործարար սպառողների և հասարակության միջև, ինչպես նաև միտված է միջազգային կապերի ընդլայնմանը: Մասնակցելով ցուցահանդեսին սիրիահայ գործարարը հնարավորություն ստացավ իր արտադրանքը ներկայացնելու ավելի քան 30 հազար այցելուների և ստեղծել նոր գործնական կապեր:

Հոկտեմբերի 7-ին կազմակերպել է գործարար բիզնես-բիզնես (B2B) համագործակցության հանդիպում, որին մասնակցել է ավտոտեխնապասարկման ոլորտում գործող 18 սիրիահայ և տեղացի գործարար: Հանդիպման հիմնական նպատակն էր նպաստել ոլորտում գործող ձեռներեցների միջև գործարար կապերի ստեղծմանը, միջավայրի բարելավմանը և հետագա համագործակցության ամրապնդմանը, քննարկվեցին նաև հարկային դաշտի խնդիրները, ՀՀ օրենքում կատարված վերջին փոփոխությունները և առանձնահատկությունները: Ինչպես նաև նույն ոլորտում գործող 14 սիրիահայ գործարարների համար տպագրվել են անհատական այցեքարտեր:

Ս.թ. հոկտեմբերի 21-ին կազմակերպել է գործարար բիզնես-բիզնես (B2B) համագործակցության հանդիպում հանրային սննդի ոլորտում գործող 17 սիրիահայ և տեղացի գործարարների միջև: Գործարար հանդիպման ընթացքում քննարկվել են ոլորտին վերաբերող խնդիրները, սննդի մատակարարման և պահպանման առանձնահատկությունները, հարկային վերջին փոփոխություններն, ինչպես նաև կնքվեցին համագործակցության պայմանագրեր Menu.am -ի հետ:

Դեկտեմբերի 10-ին կազմակերպել է ՀՀ հարկային օրենսդրության փոփոխությունների և գրանցման ընթացակարգերի վերաբերյալ մեկօրյա տեղեկատվական հանդիպում, որին մասնակցել է 13 սիրիահայ գործարար: Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ հարկային օրենսդրության փոփոխությունները, «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները և ընտանեկան ձեռնարկատիրության հարկման առանձնահատկությունները (*Հավելված 2.4*):

Դեկտեմբերի 16-ին կազմակերպվել է «Վաճառքի հմտություններ և մարքեթինգային ռազմավարություն ձեռնարկությունների համար» թեմայով մեկօրյա դասընթաց, որին մասնակցել է 12 սիրիահայ գործարար: Դասընթացի հիմնական թեմաներն են. մարքեթինգային ռազմավարություն, վաճառքի կազմակերպման առանձնահատկություններ, ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ընդհանուր դրույթներ (*Հավելված 2.4*):

Դեկտեմբերի 12-ին Երևանի քաղաքապետարանում կայացավ ՀԵԿԱ-ի (Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա) ավանդական ամանորյա բարեգործական տոնավաճառ ցուցահանդեսը, որին մասնակցել և իրենց յուրահատուկ արտադրանքն են ներկայացրել 12 սիրիահայ ձեռներեցներ:

Նույն ծրագրի շրջանակներում 3 սիրիահայ ձեռներեց՝ Շանթ Խայալյանը, Աիդա Մանտուրյանը և Կարապետ Տատաօղլեանը մասնակցել են դեկտեմբերի 18-20-ը Yerevan Expo ցուցահանդեսային կենտրոնում «ԻՆՏԵՐ ՇԱՐՄ 2015» միջազգային մասնագիտացված ամանորյա ցուցահանդեսին, որը հազեցած էր տոնական միջոցառումներով և այցելուներին հնարավորություն էր ընձեռում գնել բազմազան նվերներ: Իսկ դեկտեմբերի 19-20-ը Արմենիա Մարիոթ հյուրանոցում կայացած Ամանորյա Ցուցահանդես տոնավաճառ 2015-ին մասնակցել են 6 սիրիահայ գործարարներ (Հովհաննես Աշճյան, Սահակ Քեշիշյան, Վանի Աբո, Սիլվա Յակոբիաններ, Սիրուն Այվազյան, Աիդա Մանտուրյան):

«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2015 թվականի ծրագրով «ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում)» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:

3. ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն

Տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ծրագրերի շրջանակներում իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտներին իրազեկման, հաշվապահական հաշվառման, մաքսային ձևակերպումների ու հաշվետվությունների ներկայացման և այլ ուղղություններով սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին անհատական և խմբային հանդիպումների միջոցով տրամադրվել է 11857 աջակցություն:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ակտիվ մասնակցություն է ունեցել «Շրջանառության հարկի մասին» և «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակման աշխատանքներին: Մասնավորապես, ուսումնասիրությունների արդյունքում, իրականացվել են շրջանառության հարկով հարկման շեմի տարբեր մեծությունների դեպքում տնտեսվարողների մոտ շահութաբերության տարբեր մակարդակների հաշվարկները, ինչի արդյունքում ձևավորվել են հիմնավորված առաջարկություններ շեմի օպտիմալ չափ սահմանելու վերաբերյալ: Բացի այդ, համապատասխան հիմնավորումներով առաջարկություններ են մշակվել նաև փաստաթղթավորված և չփաստաթղթավորված շրջանառությունները տարբեր դրույքաչափերով հարկելու ձևաչափի կիրառման վերաբերյալ: Առևտրի իրականացման վայրերում (ոսկու շուկաներ) վաճառասեղանների կամ վաճառակետերի միջոցով թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի կամ թանկարժեք քարերի առքուվաճառքի գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների կողմից բարձրացված խնդիրների ուսումնասիրությունների արդյունքում

մշակվել են առաջարկություններ՝ վերջիններիս համար արտոնագրային վճարը որպես այլընտրանքային հարկման դաշտ սահմանելու վերաբերյալ: Նշված բոլոր առաջարկությունների փաթեթը ներկայացվել է ՀՀ կառավարություն, ՀՀ Ազգային ժողով և այլ մարմիններ, ինչի արդյունքում նշված առաջարկությունները հաշվի են առնվել «Շրջանառության հարկի մասին» և «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծման ժամանակ:

Վերը նշված օրենքների փոփոխությունների վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտներին իրազեկելու նպատակով ՀՀ մարզերի քաղաքային և գյուղական համայնքներում և Երևան քաղաքում իրականացվել են 26 սեմինար-խորհրդատվություններ: Սեմինարներին ներկա 1049 մասնակիցները (*Հավելված 3*) ներկայացրել են շուրջ 1600 ՓՄՁ սուբյեկտներ: Սեմինարներից բացի, շուրջ 2000 ՓՄՁ սուբյեկտներ տեղեկացվել են նշված փոփոխություններին անհատական այցելությունների միջոցով, որի ընթացքում ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է նշված փոփոխությունները պարզաբանող՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից մշակված և տպագրված տեղեկատվական թերթիկներ: Բացի այդ, ավելի քան 1500 ՓՄՁ սուբյեկտներ տեղեկացվել են նշված փոփոխությունների մասին հեռախոսազանգերի և էլեկտրոնային փոստի միջոցով:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ակտիվ մասնակցություն է ունեցել ՀՀ էկոնոմիկայի նախարարության և տարբեր գերատեսչությունների կողմից տրամադրված այլ իրավական ակտերի նախագծերի, մասնավորապես «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի ազգային ծրագրի», «Հարկային օրենսգրքի», «Մննդի անվտանգության մասին» նոր օրենքի և «Ստուգումների մասին» նոր օրենքի նախագծերի ուսումնասիրության և կարծիքների պարտաստման աշխատանքներին:

Հաշվետու ժամանակահատվածում պատրաստվել են գրություններ ԵՏՄ պայմանագրի գործարկումից հետո հայաստանյան արտահանողների համար ստեղծված տեխնիկական խնդիրների և փաստացի հարկային բեռի ավելացման վերաբերյալ և ներկայացվել ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների և ՀՀ Ֆինանսների նախարարություններ:

Սկսած ս.թ. հունիս ամսվանից Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը հանդիսանում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի /ԵՏՀ/ ձեռնարկատիրական գործունեության զարգացման ենթահանձնաժողովի անդամ: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ներկայացուցիչը մասնակցել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ձեռնարկատիրական գործունեության զարգացման դեպարտամենտի և համապատասխան ենթահանձնաժողովի նիստերին, որի ընթացքում ներկայացրել է ԵՏՄ շրջանակներում ՓՄՁ ոլորտի զարգացմանն ու ՓՄՁ շահերի պաշտպանությանն ուղղված մի շարք առաջարկներ:

Ս.թ. օգոստոս և սեպտեմբեր ամիսներին ՀՀ էկոնոմիկայի նախարարի հանձնարարությամբ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը «ՓՄՁ ներդրումներ» ՈԻՎԿ-ի, «Հայաստանի Զարգացման Հիմնադրամի» և «Հայաստանի Արտահանման ապահովագրության գործակալության» հետ համատեղ ՀՀ բոլոր մարզերում կազմակերպել է հանդիպումներ շուրջ 400 գործարարների հետ: Ներկայացվել են նշված կառույցների գործունեության հիմնական ուղղությունները: Հանդիպման ընթացքում գործարարները

ստացել են բավարար տեղեկատվություն՝ Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության զարգացման պետական ծրագրերի վերաբերյալ, որոնք իրականացվում են ֆինանսական, ներդրումային, խորհրդատվական, արտահանման, բիզնեսի միջազգայնացման, ուսուցողական, տեղեկատվական և այլ ուղղություններով աջակցության տրամադրման նպատակով:

Ս.թ. դեկտեմբերի 9-ին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամը ՀՀ էկոնոմիկայի նախարարության Տեսչական բարեփոխումների խմբի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակի և Համաշխարհային բանկի խմբի հետ համատեղ կազմակերպել է հանդիպում Գյումրիում բիզնեսով զբաղվող գործարարների հետ: Հանդիպման ընթացքում Տեսչական բարեփոխումների խմբի փորձագետները ներկայացրել են հանրապետությունում իրականացված և նախատեսվող տեսչական բարեփոխումները: Հանդիպումն ընթացել է հարց ու պատասխանի ձևաչափով, որի ընթացքում գործարարները ստացել են բազմաթիվ հարցերի պատասխաններ:

ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության շրջանակներում 2015թ. մեկնարկել է հաշվապահական հաշվառման ծառայությունների համաֆինանսավորման ծրագիրը: Ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացվում է ՓՄՁ սուբյեկտների համար հաշվապահական հաշվառման ծառայության արժեքի մասնակի փոխհատուցում: Համաձայն գործող կարգի՝ հաշվապահական հաշվառման ծառայության արժեքի մասնակի փոխհատուցում կարող են ստանալ այն ՓՄՁ սուբյեկտները, որոնք ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված են ոչ ավել քան երեք տարի կամ տվյալ պահին գործունեությունը դադարեցրել են առնվազն 6 ամսով և ցանկանում են վերսկսել այն: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից փոխհատուցվում են մինչև 1 տարվա համար մատուցվող հաշվապահական հաշվառման ծառայության արժեքի մինչև 80%-ը՝ ՀՀ մարզերում և մինչև 50%-ը՝ ք. Երևանում, որը չի գերազանցում 1 ամսվա հաշվարկով 15,000 ՀՀ դրամը՝ անհատ ձեռնարկատերերի և 25,000 ՀՀ դրամը՝ առևտրային կազմակերպությունների համար: Բացառության կարգով, մինչև 100%-ը, որը չի գերազանցի 1 ամսվա հաշվարկով 30,000 ՀՀ դրամը, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից փոխհատուցվում են սիրիահայ գործարարներին տրամադրվող ծառայության արժեքները, որոնց ֆինանսավորումը կիրականացվի միջազգային համագործակցության շրջանակներում ստացված միջոցների հաշվին: Հաշվետու ժամանակահատվածում հաշվապահական հաշվառման ծառայությունների համաֆինանսավորում ծրագրի շրջանակներում աջակցություն է ստացել 47 ՓՄՁ սուբյեկտ (*Հավելված 3.1*):

Հաշվետու ժամանակահատվածում զանգվածային լրատվամիջոցների հետ ակտիվ աշխատանք է տարվել կենտրոնի գործունեությունը լուսաբանելու և նոր ռազմավարությունն ու ուղղությունները հանրայնացնելու նպատակով:

Մեկնարկել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործունեության մասին պատմող հեռուստածրագրի հեռարձակումը Հայկական երկրորդ հեռուստաալիքով: Առաջին թողարկումը նվիրված է եղել Արարատի մարզում իրականացված ծրագրերին, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի շահառուների հաջողության պատմություններին, ընթացիկ միջոցառումներին, սպասվող որոշ իրադարձություններին: Երկրորդ ծրագիրը պատմել է Արմավիրի, Երրորդը՝ Գեղարքունիքի, չորրորդը՝ Տավուշի մարզային մասնաճյուղերի, ինչպես նաև ընթացիկ միջոցառումների մասին, ներկայացվել են պարզաբանումներ

օրենսդրական փոփոխությունների մասին, սիրիահայ գործարարների մտահոգությունների և բարձրացրած խնդիրների վերաբերյալ, ներկայացվել են նաև Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի շահառու գործարարների հաջողության պատմությունները, սպասվող միջոցառումների ժամանակացույցը: 5-րդ թողարկման ընթացքում ներկայացվել է Արագածոտնի մարզային մասնաճյուղը՝ գործարարների հաջողության պատմություններով, գործունեության ամփոփմամբ, ինչպես նաև անդրադարձ է կատարվել միջոցառումներին և հատուկ թեմաներին: 6-րդ ծրագիրը ներկայացրել է Սյունիքի մարզի մասնաճյուղի գործունեությունը, հաջողության պատմություններ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործունեությունը, անցած ամիսների գործունեության հաշվետվությունը: 7-րդ ծրագիրը պատմել է Լոռու մարզի մասնաճյուղի գործունեության մասին, ներկայացվել է 3 գործարարի հաջողության պատմություն, անդրադարձ է եղել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մասնակցությանը տարբեր միջոցառումներին, ցուցահանդեսներին: 8-րդ թողարկումը նվիրված է եղել Շիրակի մարզային մասնաճյուղի գործունեությանը: Ներկայացվել են գործարարների հաջողության պատմություններ, սիրիահայ գործարարների մասնակցությունը «Գյուղմթերքի և ավանդույթների փառատոն»-ին, ինչպես նաև «Դիջիտեք 2015» ցուցահանդեսին, որոնց մասնակցել են նաև Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի այլ շահառուներ: Գործադիր տնօրեն Գեղամ Պետրոսյանն ամփոփել է կենտրոնի 2015թ. գործունեության 9 ամիսները: 9-րդ թողարկումը նվիրվել է Վայոց Ձորի մարզային մասնաճյուղի գործունեությանը: Ներկայացվել են հաջողության պատմություններ, ներկայացվել է, թե ինչ կտա հայկական ՓՄՁ-ներին Հայաստանի մասնակցությունը ԵՄ COSME ծրագրին: 10-րդ թողարկման ընթացքում ներկայացվել է Կոտայքի մարզի մասնաճյուղի գործունեությունը: Հաջողության պատմություններին զուգահեռ ներկայացվել է նաև Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կազմակերպած միջոցառումների ամփոփագիրը: Ծրագրերն արդեն տեղադրվել են և հասանելի են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ՅուԹյուբ ալիքում:

Բացի հեռուստահաղորդումներից, ԶԼՄ-երով բազմիցս ներկայացվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործադիր տնօրենի հարցազրույցները ՓՄՁ ոլորտի խնդիրների և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործունեության վերաբերյալ: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործադիր տնօրենը հատուկ ասուլիս է հրավիրել կենտրոնի 2015թ. առաջին 5 ամիսների գործունեությունը ներկայացնելու և սիրիահայ գործարարների առաջ քաշած մտահոգություններին պատշաճ արձագանք ներկայացնելու նպատակով: Այն լայնորեն լուսաբանվել է լրատվամիջոցներով:

Կազմակերպվել է նաև «Տեղական/տարածաշրջանային տնտեսական զարգացման ցանցը՝ որպես որոշիչ գործոն Սևծովյան տարածաշրջանում մրցակցության խթանման համար» (Black Sea LRED-Net) ծրագրի ամփոփիչ մամուլի ասուլիսը: Այն նույնպես լայնորեն լուսաբանվել է լրատվամիջոցներով:

Լուսաբանվել է հուշագրերի ստորագրումը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի, IDeA, WWF, PUM հիմնադրամների միջև՝ Հայաստանում հյուրատնային բիզնեսի զարգացման վերաբերյալ:

Լրատվամիջոցներն անդրադարձել են նաև «Արմենիա էքսպո», «Գյուղմթերքի փառատոն» և այլ ցուցահանդեսներին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և ՄԱԿ-ի ՓՉԳ Հայաստանի գրասենյակի աջակցության շնորհիվ սիրիահայ գործարարների մասնակցությանը:

Յուրաքանչյուր միջոցառումից հետո Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կայքին զուգահեռ հոդվածները հայտնվում են նաև Արմենպրես, Պանորամա, Ի-մեդիա և այլ կայքերում, Արմնյուզ և Արմենիա, Հանրային հեռուստաընկերությունները ռեպորտաժներ են հեռարձակել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ծրագրերի շրջանակում իրականացվող միջոցառումների մասին:

Հայաստանի Հանրային, ԱԸ, Արմենիա, Կենտրոն հեռուստաընկերություններով ակտիվորեն լուսաբանվել է «Շրջանառության հարկի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, սիրիահայ գործարարներին տրամադրված աջակցությունը և այլ թեմաներ: Լուսաբանման ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործադիր տնօրենը պարզաբանումներ է ներկայացրել նոր փոփոխությունների, դրանց արդյունավետության և կիրառման մեթոդների վերաբերյալ: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի տնօրենը հարցազրույց է ունեցել նաև միջազգային մամուլի հետ: European Economic Insider և Monocle ամսագրերի լրագրողներն այցելել են կենտրոն և հոդվածներ պատրաստել Հայաստանի, կենտրոնի գործունեության մասին:

2015թ. փետրվարին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը մեդիաարշավ է կազմակերպել նաև ՀՀ վարչապետի «Լավագույն կին գործարար» 2015թ. մրցանակաբաշխության կազմակերպման և հայտերի ընդունման ուղղությամբ: Միջոցառումը լայնորեն լուսաբանվել է բոլոր հիմնական լրատվամիջոցներով:

Տպագրվել է «Վարկանիշ» ամսագիրը, որը ներկայացրել է Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի գործունեությունը, պատմել կենտրոնի 10-ից ավելի շահառուների մասին, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և միջազգային կազմակերպությունների գործընկերության և այդ գործընկերության շրջանակում աջակցություն ստացած ՓՄՁ-ների մասին:

Շարունակում է ակտիվորեն գործել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ֆեյսբուքյան էջը: Այն օգնում է երկխոսություն ծավալել շահառուների և կենտրոնի միջև: Ֆեյսբուքին զուգահեռ և կենտրոնի ֆեյսբուքյան էջի հետ համընթաց (սինխրոնացված) գործում է նաև կենտրոնի էջը twitter, linked in սոցիալական ցանցերում: Յուրուբ վիդեո-սոցիալական ցանցում կենտրոնը 2012թ.-ից սկսած՝ տեղադրում և ներբեռնում է իր գործունեության հետ կապ ունեցող տեսանյութեր:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել news.am, tert.am հեղինակավոր կայքերի հետ՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի 2016թ. գործունեությունն ինտենսիվ կերպով լուսաբանելու ուղղությամբ:

«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2015 թվականի ծրագրով «ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:

4. ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն

4.1 ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական աջակցություն (վարկային երաշխավորությունների տրամադրում)

Հաշվետու ժամանակահատվածում ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում գործող 6 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է 117.6 մլն ՀՀ դրամ գումարի երաշխավորություն՝ ապահովելով 171 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ: Երաշխավորություն ստացած ՓՄՁ սուբյեկտները գործունեություն են ծավալում ՀՀ Արարատի (1), Գեղարքունիքի (1), Արմավիրի (1), Արագածոտնի (1), Լոռու (1) մարզերում և ք. Երևանում (1):

Ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկի միջին գումարը կազմել է 28.5 մլն ՀՀ դրամ, վարկային երաշխավորության միջին գումարը՝ 19.6 մլն ՀՀ դրամ, տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքը՝ 14%: Վարկային պարտավորությունների երաշխիքով միջին ապահովվածությունը կազմել է 64.8%: Վարկային երաշխավորությունները տրամադրվել են ՓՄՁ Ներդրումներ ՈւՎԿ-ի (5) և Արմավիրսբանկի (1) միջոցով (Հավելված 4.1):

4.2 Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն (վարկային երաշխավորությունների տրամադրում)

Հաշվետու ժամանակահատվածում ֆինանսական աջակցություն են ստացել «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրին մասնակցած առավել իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած 169 սկսնակ գործարար: Ստացված վարկերի ընդհանուր գումարը կազմել է 683.5 մլն ՀՀ դրամ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի երաշխավորությունը՝ 701.7 մլն ՀՀ դրամ: Վարկավորումն իրականացվել է գործընկեր «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի միջոցով (Հավելված 4.2):

Ծրագրի շրջանակներում սկսնակ գործարարներին տրամադրված երաշխավորության միջին գումարը կազմել է 4.1 մլն ՀՀ դրամ, ստացված վարկային միջոցների միջին գումարը՝ 4.0 մլն ՀՀ դրամ:

Տրամադրված երաշխավորություններն ըստ տարիների

	<i>/մլն դրամ/</i>								
	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
Երաշխավորություն	30.2	44.8	109.4	53.5	37.4	268.4	798.1	800.1	701.7
Վարկ	25.3	37.4	91.5	44.8	31.2	262.6	789.4	792	683.5
Քանակ	35	41	65	30	17	120	224	225	169

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներն ըստ մարզերի

Մարզ	Քանակ	Վարկի գումար	Երաշխավորություն
Երևան	38	165,918,800	169,743,874
Գեղարքունիք	23	92,990,000	95,276,032
Արագածոտն	10	26,477,500	27,277,575
Արմավիր	9	39,826,200	40,876,759
Լոռի	7	25,270,000	26,006,007
Սյունիք	12	47,968,000	49,341,882
Կոտայք	4	19,000,000	19,541,514
Շիրակ	15	57,320,000	58,967,560
Վայոց Ձոր	16	68,189,285	70,132,731
Տավուշ	29	115,685,000	118,909,825
Արարատ	6	24,897,000	25,612,921
Ընդամենը	169	683,541,785	701,686,

4.3 Գործարար նախաձեռնությունների աջակցություն:

Հաշվետու ժամանակահատվածում ՓՄՁ սուբյեկտներին «Գործարար նախաձեռնությունների աջակցություն» փորձնական ծրագրի շրջանակներում ՀՀ Արարատի մարզում գործող 1 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է 5.5 մլն ՀՀ դրամ գումարի երաշխավորություն՝ ապահովելով 5 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ:

2015

«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» թվականի ծրագրով «ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն» ծրագրի իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:

5. Տեղական տնտեսական զարգացում

Հաշվետու ժամանակահատվածում ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակներում համայնքների տնտեսական ներուժի բացահայտման ուղղությամբ «Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատում» է իրականացվել 10 համայնքային խմբերում (կլաստեր), որտեղ ընդգրկվել են 35 համայնքներ: Բացահայտվել են 179 տնտեսական և ենթակառուցվածքային նախաձեռնություններ:

Իրականացվել են հետևյալ ենթակառուցվածքային ծրագրերը.

1. Դեբետավան գյուղական համայնքի ոռոգման համակարգի գոյություն ունեցող հորատանցքի շահագործման համար անհրաժեշտ պոմպի ձեռքբերում և տեղադրում:

2. Բերդավան համայնքի ոռոգման համակարգի մասնակի վերակառուցում:
3. Լենուդի գյուղական համայնքի ոռոգման համակարգի մասնակի վերակառուցում:
4. Կողբ գյուղական համայնքի ոռոգման համակարգի մասնակի վերակառուցում:
5. Բերքաբեր գյուղական համայնքի ոռոգման համակարգի մասնակի վերակառուցում:
6. Դիտավան գյուղական համայնքի ոռոգման համակարգի մասնակի վերակառուցում:
7. Արտենի համայնքների ոռոգման համակարգի մասնակի վերակառուցում:
8. Վահան գյուղական համայնքի հեռավոր արոտավայրում 24 կովի միաժամանակ մեխանիզացված կթման համար փակ շինության կառուցում:
9. Նիզավան գյուղական համայնքի արոտավայրի ջրարբիացում (խմոցների կառուցում):
10. Սարալանջ գյուղական համայնքի ոռոգման խողովակաշարի մասնակի վերանորոգում:
11. Վեդի քաղաքում չորացված մրգերի և բանջարեղենների ուսումնասիրտադրական կենտրոնի համար սառնարանային խցիկի կառուցում և ջերմամեկուսացում, սառնարանային սարքավորումների և արտադրական գույքի ձեռքբերում:
12. Կոթի համայնքի «ՉԻԶ ՊՌՈԴՈՒԿՏ» ՍՊԸ-ի համար 2000 լիտր տարողությամբ կաթի սառնարանի ձեռք բերում՝ Կոթի և շրջակա համայնքների հեռագնա արոտներում կաթի մթերումը կազմակերպելու նպատակով:
13. Արարատի մարզի Փոքր Վեդի համայնքում խորքային հորի վերականգնում և ոռոգման գծի կառուցում:

«Տեղական տնտեսական զարգացում» ծրագրի իրականացման ամփոփ ցուցանիշներ

Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատում				
h/h	Մարզ	Իրականացման վայրը /համայնքները կլաստերում/	Իրականացման ժամանակա հատվածը	Բացահայտված նախաձեռնությունների քանակ
1	Արագածոտն	Արտենի, Արագածավան	հունվար 2015	24
2	Լոռի	Գյուլագարակ, Գարգառ, Կուրթան, Վարդաբլուր, Պուշկինո	փետրվար - 2015	21
3	Կոտայք	Նոր Գեդի, Նոր Արտամետ, Մրգաշեն	Ապրիլ 2015	15
4	Կոտայք	Բջնի, Արզական, Ալափարս, Կարենիս	Հունիս 2015	18
5	Կոտայք	Կամարիս, Գեղաշեն, Զովք	Հուլիս 2015	14
6	Կոտայք	Արամուս, Կաթնաղբյուր, Ակունք, Նոր Գյուղ	Հուլիս 2015	13
7	Սյունիք	Տաթև, Հալիձոր, Շինուհայր, Սվարանց, Տանձատափ	Օգոստոս 2015	20

8	Գեղարքունիք	Վարդենիկ, Վաղաշեն, Զուլաքար	Հոկտեմբեր 2015	21
9	Արագածոտն	Ագարակ, Ուջան, Աղձք, Ոսկևազ	Նոյեմբեր 2015	18
10	Արմավիր	Արևաշատ, Մուսալեռ	Դեկտեմբեր 2015	15

«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2015 թվականի ծրագրով «Տեղական տնտեսական զարգացում» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:

6. Ոլորտային բիզնեսներին աջակցություն

Հաշվետու ժամանակահատվածում ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակներում ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ, Վահան, Թթուջուր, Գետիկ ու Մարտունի համայնքներում կազմակերպվել են անհատական խորհրդատվություններ՝ 8 և տեխնոլոգիական դասընթաց պանրի արտադրության պայմանների ու տեխնոլոգիաների բարելավման վերաբերյալ՝ 9 պանրագործների և պանրագործությամբ զբաղվելու մտադրություն ունեցողների համար (*Հավելված 5.1*):

ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքում անցկացվող «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում իրականացված դասընթացի 11 մասնակիցների համար կազմակերպվել են 4 տեխնոլոգիական դասընթաց/խորհրդատվություններ մրզի և բանջարեղենների չորացման և սառնարանային տնտեսություններում պահպանման վերաբերյալ (*Հավելված 5.1*): Բացի այդ, նույն դասընթացի մասնակիցներին հասցվել են տեղեկություններ մոդելային չորանոցներ ու սառնարանային տնտեսություններ կառուցելու համար անհրաժեշտ շինանյութերի, սարքավորումների և այլ միջոցների տեսակների, քանակների և գների վերաբերյալ, ինչը հնարավորություն է տվել նրանց առավել իրատեսական ու հիմնավորված բիզնես ծրագրեր մշակել:

Արմավիրի մարզից երեք շահառուների համար կազմակերպվել է անհատական խորհրդատվություն՝ սառնարանային տնտեսություն հիմնելու առանձնահատկությունների շուրջ:

Տավուշի մարզի Սարիգյուղ, Լուսաձոր և Սևքար գյուղերի տեխնոլոգիական դրամաշնորհի հավակնորդ 3 ջերմոց կառուցողի համար ներգրավվել է փորձագետ՝ ջերմոցներ կառուցելու վերաբերյալ անհատական խորհրդատվություններ անցկացնելու և ջերմոցները կառուցելու ընթացքում ուղղություն ցույց տալու համար (*Հավելված 5.1*):

Մշակվել է ջերմատնային տնտեսություն հիմնելու և շահագործելու վերաբերյալ օրինակելի գործարար մոդելը՝ տեխնիկական ու տեխնոլոգիական բաղադրիչներով, որտեղ ներառվել են տեղեկություններ ջերմատների տեսակների, կառուցվածքի, օդափոխության համակարգերի, ջեռուցման և ոռոգման համակարգերի վերաբերյալ:

«Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ-ի հետ մշակվել և տպագրվել է չորացված մրգի արտադրության և պանրի փոքրամասշտաբ արտադրության գործարար ուղեցույցները:

«ԲԻ-ԷՍ-ՄԻ» ՍՊԸ-ի հետ մշակվել և տպագրվել է «Ջերմոցային տնտեսությունների կառուցման, շահագործման և մշակության հիմունքներ» գրքույկը:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) և «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման հիմնադրամի» (CARD) հետ համատեղ տպագրված «Պանրի արտադրությունը ֆերմերային տնտեսություններում» և «Միջազգային ֆինանսական կորպորացիայի» (IFC) կողմից տպագրված «Պատշաճ արտադրական պրակտիկայի և պատշաճ հիգիենայի պրակտիկայի կիրառման ձեռնարկ չորացված միրգ ու բանջարեղեն արտադրողների համար» ձեռնարկների տրամադրումը գործող և սկսնակ ՓՄՁ-ներին:

Հաշվետու ժամանակահատվածում «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի և Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) հետ համագործակցության շրջանակներում 25 սկսնակ գործարարների տրամադրվել է դրամաշնորհ՝ սարքավորումների և նյութերի տեսքով (*Հավելված 5.2*):

Ընդհանուր առմամբ, ծրագրի շրջանակներում 2015 թվականի ընթացքում 40 հոգու տրամադրվել է 92 աջակցություն՝ տեխնոլոգիական դասընթացի, անհատական խորհրդատվությունների և դրամաշնորհի տրամադրման տեսքով:

Մշակվել է 3 օրինակելի գործարար մոդել/ուղեցույց՝ պանրագործության, չրագործության և ջերմոցային տնտեսությունների ուղղությամբ:

«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2015 թվականի ծրագրով «Ոլորտային բիզնեսներին աջակցություն» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:

7. Կանանց ձեռներեցությանն աջակցություն

Ասիական զարգացման բանկի (ADB) տեխնիկական աջակցության շրջանակներում իրականացվող «Կանանց ձեռներեցության զարգացում» ծրագիրը մեկնարկել է 2013թ. մարտի 1-ից և շարունակվել 2015թ.-ի ընթացքում: Ծրագրի նպատակն է բարելավել կանանց ձեռնարկատիրական կարողությունները և բարձրացնել ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը կին գործարարների համար: Ծրագիրն իրականացնող կազմակերպությունն է գերմանական «Փեմ Քոնսալթ» ընկերությունը:

Ծրագրի շրջանակներում իրականացվել է «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության» 4 ծրագիր՝ Երևանում, ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր, Արարատի մարզի Արտաշատ և Սյունիքի մարզի Կապան քաղաքներում (*Հավելված 2.1*):

Ս.թ. փետրվարի 20-ին Հայաստանում կանանց ձեռներեցության զարգացման ուղղությամբ ծրագրեր իրականացնող տեղական և միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ «Էրեբունի Պլազա» բիզնես-կենտրոնում կազմակերպվել է աշխատանքային հանդիպում «Կանանց ձեռներեցության զարգացումը Հայաստանում»

թեմայով, որի ընթացքում ներկայացվել է 2014 թվականին իրականացված կին գործարարների կարիքների ուսումնասիրության վերլուծության արդյունքները, ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները, ինչպես նաև 2015 թվականին նախատեսված ծրագրային միջոցառումները և համագործակցության հնարավորությունները:

2014 թվականի ընթացքում մեկնարկված «Ուղղորդում» (Mentorship) ծրագրի շրջանակներում 2015թ. փետրվար-մարտ ամիսներին իրականացվել է միջոցառման երկրորդ՝ վերջնական մոնիթորինգը, որի արդյունքները ամփոփվել են ս.թ. հուլիսի 24-ին կայացած աշխատանքային հանդիպման ընթացքում:

Ս.թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսներին ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր, Տավուշի մարզի Իջևան, Կոտայքի մարզի Չարենցավան և Լոռու մարզի Ալավերդի քաղաքներում կազմակերպվել են տեղեկատվական-խորհրդատվական բնույթի աշխատանքային հանդիպումներ, որոնց մասնակցել են արտադրության և ծառայության ոլորտներում գործող 75 կին գործարարներ: Հանդիպումների նպատակն էր ծանոթանալ գործարարությամբ զբաղվող կանանց կարիքներին և վերջիններիս ներկայացնել Հայաստանում կանանց ձեռներեցության զարգացման ուղղությամբ միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերին, ինչպես նաև նպաստել նրանց միջև գործարար կապերի հաստատմանը: Մասնակիցներին իրենց ծրագրերն են ներկայացրել Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի (EBRD) Փոքր բիզնեսի աջակցության «Կանայք բիզնեսում» ծրագրի, ADB ֆինանսավորմամբ ձեռնարկատիրական վարկ տրամադրող ֆինանսական կառույցների և Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի ներկայացուցիչները: Նմանատիպ աշխատանքային հանդիպում է կազմակերպվել նոյեմբերի 25-ին Երևան քաղաքում, որին մասնակցել են 22 կին գործարարներ, այդ թվում՝ նաև սիրիահայ սկսնակ կին գործարարներ: Այս հանդիպումը տարբերվում էր նախորդներից, քանի որ նրա կարևոր նպատակներից էր հանդիսանում նաև սիրիահայ սկսնակ գործարար կանանց համագործակցության հաստատումը տեղացի գործարար կանանց հետ և նրանց ինտեգրումը Հայաստանի բիզնես միջավայրում:

Ծրագրի շրջանակներում համագործակցություն է հաստատվել “Cherie Blair” հիմնադրամի հետ՝ հնարավորություն տալով Հայաստանի 20 կին գործարարներին անվճար մասնակցելու հիմնադրամի կողմից իրականացվող մենթորինգի ծրագրին: 2015 թվականի փետրվար-մայիս ամիսների ընթացքում նրանք հնարավորություն են ստացել մասնակցելու մենթորինգի վերաբերյալ առցանց դասընթացին և արդյունքում թեստավորման փուլը հաջողությամբ անցած 11 կին գործարար (մենթի) 2015 թվականի մայիսից մեկ տարի ժամկետով առցանց համագործակցում է յուրաքանչյուրի համար տարբեր երկրներից ընտրված մենթորների հետ:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը աջակցել է հունիսի 8-11-ը Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի (ՀԵԿԱ) և ՀՀ կին ձեռներեցների ցանցի (ՀՀ ԿՁՑ) նախաձեռնությամբ և Կին ձեռներեցների համաշխարհային ասոցիացիայի (FCEM.org) հովանու ներքո անցկացված «Կանանց ձեռներեցության երևանյան շաբաթ» միջոցառման կազմակերպմանը: Միջոցառումները ներառել են կանանց ձեռներեցության միջազգային համաժողովի, բիզնես-բիզնես հանդիպումների (B2B) և էքսպո ցուցահանդես վաճառքի կազմակերպման աշխատանքներ: Համաժողովի նպատակներն էին՝ նպաստել

Հայաստանի և արտերկրի կին ձեռներեցների ու գործարարների միջև կապերի ստեղծմանը և համագործակցության ամրապնդմանը, կանանց ձեռներեցության խթանմանը, փոքր ու միջին ձեռնարկատիրության համար գործարար միջավայրի բարելավմանը, ներդրումների իրականացմանը և համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը: Ընդհանուր առմամբ, 21 կին գործարարներ հնարավորություն ստացան մասնակցելու գործարար համաժողովին, բիզնես-բիզնես (B2B) հանդիպումներին և էքսպո ցուցահանդեսին:

Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կողմից ս.թ. մայիսի 8-ին ՀՀ Արարատի մարզի Մարմարաշեն գյուղում գործող «Ջերմատներ» ընկերությունում կազմակերպվել է «Ջերմոցային տնտեսությունների կառուցում և բույսերի մշակում» թեմայով տեխնոլոգիական դասընթաց, որին մասնակցել է 17 գործարար ՀՀ Վայոց Ձորի և Արարատի մարզերից: Դասընթացի ընթացքում մասնակիցներին մանրամասն ներկայացվել է ջերմոցների կառուցման և ջերմատներում բանջարեղենի ու ծաղիկների մշակման տեխնոլոգիաների առանձնահատկությունները, մասնավորապես, ներդրվող սորտերը, սերմերի արժեքը, սածիլների մշակման տեխնոլոգիան և արժեքը, պարարտացման և ոռոգման նորմաները, ախտահանման միջոցառումները, ջերմաստիճանային պայմանները և այլն: Բացի այդ, ֆերմերները տեղում ծանոթացել են «Ջերմատներ» ընկերության կողմից նախագծվող և տեղադրվող ջերմոցների առանձնահատկություններին ու առավելություններին (*Հավելված 2.4*):

«Կանանց ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում ս.թ. օգոստոսից-հոկտեմբեր ամիսների ընթացքում ՀՀ Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Կոտայքի, Լոռու և Վայոց Ձորի մարզերի Արմավիր, Արտաշատ, Ապարան, Չարենցավան, Ալավերդի և Վայք քաղաքներում կազմակերպվել են դասընթացներ «Համակարգչային գրագիտությունը Հայաստանի գործարար կանանց համար» թեմայով, որոնց մասնակցել է 68 կին: Դասընթացի հիմնական նպատակն է բարձրացնել գործարար կանանց համակարգչային գիտելիքների մակարդակը: Դասընթացները անցկացվել են երկու փուլով՝ հիմնարար (basic) և խորացված (advanced), յուրաքանչյուրը 2 օր/8 ժամ տևողությամբ և ներառել են ինչպես ընդհանուր համակարգչային գրագիտություն՝ Windows, MS Office, Ինտերնետ բրաուզերներ, բիզնես տեղեկատվության օնլայն որոնում, էլեկտրոնային փոստ և բիզնես հաղորդակցություն, այնպես էլ բիզնեսի խթանումը սոցիալական ցանցերի և մասնագիտական կայքերի միջոցով, սեփական վեբ կայքի ստեղծումն ու զարգացումը, բիզնես վաճառք, գործարար կապերի որոնում և այլ թեմաներ (*Հավելված 2.4*):

ՀՀ վարչապետի 2015 թվականի «Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխություն

ՀՀ տնտեսական զարգացման բնագավառում կանանց ձեռնարկատիրական նախաձեռնողության խրախուսման, տնտեսության տարբեր ճյուղերում կին գործարարների նվաճումներն ըստ արժանավոյն գնահատման, հանրահռչակման և սատարման նպատակով հայտարարվել է ՀՀ վարչապետի 2015 թվականի «Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխությունը հետևյալ 5 անվանակարգերով.

- «Լավագույն կին գործատու»
- «Լավագույն կին նորարար»
- «Լավագույն ապրանքանիշ»

«Լավագույն երիտասարդ կին գործարար»

«Լավագույն սկսնակ կին գործարար»:

Մրցանակաբաշխության կազմակերպչական աշխատանքներն իրականացրել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը: Մասնավորապես, ս.թ. փետրվար-մարտ ամիսներին լրամշակվել է «Լավագույն կին գործարար» ՀՀ վարչապետի մրցանակաբաշխության անցկացման կարգը, հրապարակվել է մրցանակաբաշխության մասին հայտարարությունը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի, ինչպես նաև մի շարք լրատվամիջոցների կայք-էջերի և սոցիալական ցանցերի միջոցով, իրականացվել է մրցանակաբաշխությանը մասնակից կին գործարարների հայտերի հավաքագրման և ճշգրտման աշխատանքներ:

Ընդհանուր առմամբ ներկայացվել է 155 հայտ, որոնցից 27-ը՝ ք. Երևանից և 128-ը՝ ՀՀ մարզերից: Մրցույթն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով, ինչպես նաև ելնելով մրցանակաբաշխության անցկացման կարգի համապատասխան դրույթներից, մշակվել են ներկայացված բոլոր հայտերը, կատարվել վերլուծություն և պատրաստվել համառոտ տեղեկատվություն՝ ըստ յուրաքանչյուր անվանակարգի: Այդ տեղեկատվությանը ծանոթանալու նպատակով, նախապես էլեկտրոնային փոստի միջոցով հանձնաժողովի անդամներին ներկայացվել է յուրաքանչյուր անվանակարգի ցանկը՝ Երևանի և մարզերի համար: Մրցանակաբաշխության արդյունքները ամփոփվել են ս.թ. մարտի 31-ին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի նիստերի դահլիճում կազմակերպված մրցույթային հանձնաժողովի նիստի ընթացքում:

Ապրիլի 7-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի ունեցած հանդիսավոր նիստի ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարար Կարեն Զյմարիտյանը պատվոգրեր հանձնեց «Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխության 10 հաղթողներին: Խրախուսական պատվոգրեր, նվերներ և մրցանակներ հանձնեցին նաև միջազգային մի շարք կազմակերպություններ, մասնավորապես՝ ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID PRP) ծրագրի, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) և նրա կողմից իրականացվող «Երիտասարդ ձեռներեցներին աջակցություն» ծրագրի, Ասիական զարգացման բանկի (ADB) «Կանանց ձեռներեցության զարգացում» ծրագրի շրջանակներում, ինչպես նաև ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի (UNHCR), Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC), Վերակառուցման զարգացման եվրոպական բանկի «Փոքր բիզնեսի աջակցություն Հայաստանում» (EBRD BAS) ծրագրի և Գործարարության աջակցության գրասենյակի (EBRD BSO), «Հայաստանի երիտասարդ կանանց սոցիալապես հասարակական կազմակերպության (AYWA) կողմից:

«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2015 թվականի ծրագրով «Կանանց ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:

8. Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում

Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցությունը և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովումն իրականացվում է հիմնականում Հայաստանում ՁԵՑ-ի գործունեության շրջանակներում, ինչպես նաև ՓՄՁ միջազգայնացմանն ուղղված այլ միջոցառումների շրջանակներում:

8.1 ՓՄՁ միջազգայնացմանն աջակցություն ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) գործունեության շրջանակներում

Հաշվետու ժամանակահատվածում ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) գործունեության շրջանակներում աշխատանքներ են իրականացվել Հայաստանում ՁԵՑ-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման, հայաստանյան և արտասահմանյան ձեռնարկությունների միջև գործարար կապերի հաստատման, գործարար համագործակցության հիմնապաշարի համալրման, ՁԵՑ-ի անդամ կազմակերպությունների միջև կապերի հաստատման և համագործակցության ընդլայնման, տեղեկատվության փոխանակման և այլ ուղղություններով:

Մշակվել և գործարարների շրջանում տարածվել է Հայաստանում ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի էլեկտրոնային նորությունների ամսական տեղեկաթերթի 12 նոր համար՝ անգլերեն և հայերեն լեզուներով, որոնց հասցեատերերի քանակը գերազանցում է 3000-ը: Տեղեկաթերթը պարունակում է տեղեկատվություն հաղորդակցման կենտրոնի գործունեության, գործարար և տեխնոլոգիական համագործակցության առաջարկների և արտերկրում նախատեսվող գործարար միջոցառումների վերաբերյալ: Բացի այդ, մշակվել և հայ գործարարների շրջանում տարածվել է նաև «Միջազգային գործարար համագործակցության միջոցառումներ» խորագրով տեղեկաթերթի 4 համար, որն իր մեջ ներառում է տեղեկատվություն արտերկրներում տեղի ունեցող միջոցառումների մասին: Այս տեղեկաթերթի հասցեատերերի քանակը ևս գերազանցում է 3000-ը:

Մշակվել և շուրջ 350 գիտահետազոտական ինստիտուտների միջև տարածվել է «Տեխնոլոգիական առաջարկների և հարցումների» եռամսյակային տեղեկաթերթի 1 համար, որն իր մեջ պարունակում է տեխնոլոգիական առաջարկներ և հարցումներ ՁԵՑ անդամ երկրներից:

ՁԵՑ-ի գործունեության շրջանակներում ձեռնարկությունների միջև գործարար համագործակցության հաստատման նպատակով ՁԵՑ-ի գործարար համագործակցության հիմնապաշարում տեղադրվել են ևս 23 գործարար համագործակցության առաջարկներ (*Հավելված 6*)՝ ընդհանուր առմամբ կազմելով 170: Ներկայումս ևս 2 գործարար համագործակցության առաջարկներ գտնվում են մշակման փուլում:

Գործարարների կողմից ներկայացված պահանջների համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում 28 հայկական ընկերությունների համար 53 հարցում է կատարվել ՁԵՑ-ի անդամ երկրներում ջախերի, պահածոների մատակարարների, գործվածք արտադրողների, թափոնային սովարաթղթեր արտադրողների, սանիտարական կերամիկա արտադրողների, շինարարական արքեսուարների վաճառքով զբաղվող ընկերությունների և այլնի վերաբերյալ: ՁԵՑ-ում տեղադրված հարցումների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն է ստացվել Ռուսաստանի, Ուկրաինայի, Մեծ Բրիտանիայի, Մոլդովայի, Լեհաստանի, Չեխիայի, Բուլղարիայի, Թուրքիայի,

Գերմանիայի, Իտալիայի և այլ երկրների գործընկերներից, որը փոխանցվել է գործարարներին:

ՁԵՑ-ի գործընկերների կողմից ներցանցում տեղադրված 39 հարցումներին ուղարկվել են տեղական 340 ընկերությունների կոնտակտները, այդ թվում՝ ոգելից խմիչքներ ներմուծողների, բժշկական արքեսուարներ ներմուծողների, չիր արտադրողների, կոսմետիկ միջոցներ, ինչպես նաև դեղորայք ներմուծողների, ջայլամի ձու արտադրողների, առողջ ապրելակեայի հետ առնչվող ընկերությունների (սպորտային համալիրներ, սպա սրահներ, օրգանական սննդամթերքի արտադրողներ/ներմուծողներ և այլն), տեքստիլ արտադրողների, տնտեսական ապրանքներ ներմուծողների, տուրիստական ընկերությունների, պարարտանյութ ներմուծողների, հացամթերք արտադրողների, գովազդային ծառայություններ մատուցողների և այլն: Հարցումները տեղադրված են Դանիայի, Ուկրաինայի, Լեհաստանի, Հունգարիայի, Լատվիայի, Հունաստանի, Թուրքիայի, Ռուսաստանի, Չեխիայի, Իսպանիայի և այլ երկրների գործընկերների կողմից:

Հայկական 24 ընկերությունների կողմից թվով 79 հետաքրքրության առաջարկներ են ուղարկվել ՁԵՑ ներցանցում տեղադրված առաջարկների նկատմամբ:

ՁԵՑ-ի ներցանցում տեղադրված 44 գործարար համագործակցության առաջարկների նկատմամբ ստացվել են 88 հետաքրքրության առաջարկներ Հունգարիայից, Ռումինիայից, Ֆրանսիայից, Անգլիայից, Լիտվայից, Ռուսաստանից, Իտալիայից, Իսպանիայից, Բելգիայից, Բուլղարիայից և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում 100-ից ավելի գործարարների միջև փոխանակվել են կոնտակտային տվյալներ, որոնցից 2-ի միջև ներկայումս բանակցություններ են ընթանում համագործակցության հաստատման ուղղությամբ:

2015թ.-ի ընթացքում կազմակերպվել են նաև ՓՄՁ սուբյեկտների միջազգայնացմանն ու մրցունակության բարձրացմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Մասնավորապես, 2015թ.-ի հունվարի 29-30-ին Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) նախաձեռնությամբ կազմակերպվել է դասընթաց սննդի արտադրության ոլորտում գործող ընկերությունների համար: Դասընթացը վերաբերում էր սննդի անվտանգության կառավարման համակարգի ինքնուրույն ներդրմանը (HACCP, ISO 22000, FSSC 22000): Դասընթացին ապահովվել է 13 ՓՄՁ սուբյեկտների մասնակցությունը: Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կողմից Սևծովյան ավազանի երկրների 2007-2013 թվականների համատեղ գործողությունների ծրագրի 2-րդ փուլի շրջանակներում իրականացվող «Տարածաշրջանային բիզնես ինկուբատորների ցանց» (Black Sea BI-Net) ծրագրի շրջանակներում 2015թ. փետրվարի 2-5-ը կազմակերպվել է դասընթաց, որին մասնակցել են 25 ընկերությունների ներկայացուցիչներ: Նշված միջոցառման ընթացքում ներկայացվել են նաև ՁԵՑ-ի գործիքները: Փետրվարի 26-ին Ավստրիայի Վելս քաղաքում տեղի ունեցած "Let's connect: business & innovation - Biomass and Energy Efficiency in Buildings Brokerage Event" գործարար համագործակցության հաստատման միջոցառմանը մասնակցել է հայկական «Բիոջեոուցման լուծումների հետազոտողներ» ընկերությունը: Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը հանդես է եկել որպես միջոցառման համակազմակերպող:

Մարտի 16-19-ը Սևծովյան ավազանի երկրների 2007-2013 թվականների համատեղ գործողությունների ծրագրի 2-րդ փուլի շրջանակներում իրականացվող «Տարածաշրջանային բիզնես ինկուբատորների ցանց» (Black Sea BI-Net) ծրագրի

շրջանակներում ընկերությունների այցելություն է իրականացվել Ռուսիայի Կոնստանտա և Տուլչեա քաղաքներ: 7 հայկական ընկերություններ ներկայացվել են 19 ռուսական ընկերությունների:

Ա.թ. ապրիլի 26-28-ը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը հանդես է եկել որպես «Արտադրված է Հայաստանում» ցուցահանդեսի համակազմակերպող: Ցուցահանդեսին Ձեռնարկությունների Եվրոպական Ցանցի շրջանակներում մասնակցել են թվով 18 հայկական ընկերություններ, որոնք, ընդհանուր առմամբ, հանդիպել են 58 ընկերությունների հետ, այդ թվում՝ Ռուսաստանից, Անգլիայից, Չինաստանից, Հոլանդիայից և այլն:

Մայիսի 26-27-ը Սևծովյան ավազանի երկրների 2007-2013 թվականների համատեղ գործողությունների ծրագրի 2-րդ փուլի շրջանակներում իրականացվող «Տեղական/տարածաշրջանային տնտեսական զարգացման ցանցը՝ որպես որոշիչ գործոն Սևծովյան տարածաշրջանում մրցակցության խթանման համար» (Black Sea LRED-Net) ծրագրի շրջանակներում ընկերությունների այցելություն է իրականացվել Հունաստանի Կատերինի քաղաք: 5 հայկական ընկերություններ հանդիպել են 16 հունական և բուլղարական ընկերությունների հետ: Նշված հանդիպումների արդյունքում 3 հայկական ընկերություններ կնքել են համագործակցության համաձայնագրեր հունական ընկերությունների հետ:

Ա.թ. նոյեմբերի 10-ին Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության կողմից կազմակերպված «Արտոնությունների ընդհանրացված համակարգին» (GSP+) նվիրված տեղեկատվական միջոցառմանը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի աջակցությամբ մասնակցել են թվով 7 ընկերությունների ներկայացուցիչներ:

Հաշվետու ժամանակահատվածում Սիբիրի պետական բժշկական համալսարանի և Երևանի պետական բժշկական համալսարանի Սիմուլյացիոն ուսումնական կենտրոնի միջև կնքվել է համագործակցության համաձայնագիր՝ որպես Սիբիրի պետական բժշկական համալսարանի ներկայացուցիչ հանդես գալու վերաբերյալ:

«Նյու Թեքսոլոգի Էդուքեյշն Ֆոնդ» հայկական բարեգործական հիմնադրամի նախաձեռնությամբ Ա.թ. հոկտեմբերի 4-ից նոյեմբերի 5-ը իրականացվել է «Հայկական ՏՀՏ Եվրոպական ավտոարշավ»-ը: Ավտոարշավին մասնակցել են հայկական 26 ՏՀՏ ընկերությունների 36 ներկայացուցիչներ: ՏՀՏ ավտոարշավը ներառել է 18 երկրներ: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են 12 պաշտոնական և ավելի քան 30 անհատական հանդիպումներ Վիեննայում, Կատովիցեում, Պրահայում, Բեռլինում, Փարիզում, Մարսելում, Ջագրեբում, Միլանում, Բելգրադում և Սոֆիայում: Նշված ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ՁԵՑ-ի միջոցով կազմակերպել է ստորև նշված երեք միջոցառումները:

Չեխիայի մայրաքաղաք Պրահայում Ա.թ. հոկտեմբերի 13-ին, Պրահայի տեխնոլոգիական կենտրոնի աջակցությամբ (որը հանդիսանում է ՁԵՑ գործընկեր), կազմակերպվել է կոնֆերանս և գործարար հանդիպումներ, որոնց ընդհանուր առմամբ մասնակցել են 10 չեխական ընկերությունների ներկայացուցիչներ և 26 հայկական ընկերություններ, որոնք ընդհանուր առմամբ ունեցել են 104 հանդիպումներ:

Բելգիայի մայրաքաղաք Բրյուսելում Ա.թ. հոկտեմբերի 20-ին կազմակերպվել են գործարար հանդիպումներ, որոնց մասնակցել են 17 բելգիական և 26 հայկական ընկերություններ, որոնք ընդհանուր առմամբ ունեցել են 62 հանդիպումներ:

Բացի այդ, Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը հանդես է եկել նաև որպես ս.թ. հոկտեմբերի 14-ին Լեհաստանի Կատովիցե քաղաքում տեղի ունեցած «ՓՄՁ 5-րդ եվրոպական կոնգրեսի» շրջանակներում գործարար համագործակցության միջոցառման համակարգակերպող: Միջոցառմանը մասնակցել են 9 հայկական ընկերություններ, որոնք ընդհանուր առմամբ ունեցել են 11 հանդիպումներ:

Ամփոփելով «Հայկական ՏՀՏ եվրոպական ավտոարշավ»-ի արդյունքները կարելի է նշել, որ Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի աջակցությամբ կազմակերպված վերը նշված միջոցառումների արդյունքում 26 հայկական ընկերություններ մասնակցել են շուրջ 177 հանդիպումների՝ Եվրոպայում և Եվրոպայից դուրս գործող ընկերությունների հետ: Նշված հանդիպումների արդյունքում հայկական ընկերությունները Եվրոպական գործընկերների հետ ձեռք են բերել ավելի քան 100 նախնական կապեր և պայմանավորվածություններ:

Նկատի ունենալով, որ 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտվել է Ձեռնարկությունների Եվրոպական Ցանցի Աշխատանքային ծրագիրը, ՁԵՑ-ում գործունեությունը շարունակելու նպատակով Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ նոր հայտ է ներկայացրել «Եվրոպական ՓՄՁ գործակալության» (EASME) կողմից հայտարարված Ձեռնարկությունների Եվրոպական Ցանցի 2015-2020 թվականների մրցույթին: Մրցույթի արդյունքում ներկայացված հայտը գնահատվել է դրական և ուժի մեջ կմտնի Եվրոպական Միության «Ձեռնարկությունների և փոքր ու միջին ձեռնարկությունների մրցունակություն (COSME) (2014-2020թթ.)» (Competitiveness of Enterprises and Small and Medium-sized Enterprises (COSME, 2014 to 2020)) ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության համաձայնագրի ստորագրման պահից:

Անդամակցելով COSME ծրագրին՝ Հայաստանի ՓՄՁ հատվածը առավելապես կներգրավվի ԵՄ-ում ընթացող ՓՄՁ հատվածին ուղղված գործընթացներին և հնարավորություն կստանա օգտվել Եվրամիության կողմից ՓՄՁ-ների զարգացմանն ուղղված բազմաթիվ նախաձեռնություններից:

Համաձայնագիրը ստորագրվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարի կողմից 2015թ. դեկտեմբերի 10-ին Բրյուսելում:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականի ընթացքում ՁԵՑ-ի շրջանակներում աջակցություն է տրամադրվել **225 ՓՄՁ սուբյեկտների**, այդ թվում՝

- 23 ՓՄՁ սուբյեկտների գործարար նկարագրեր տեղադրվել են ՁԵՑ-ում,
- 28 ՓՄՁ սուբյեկտների կողմից ստացված հարցումներ տեղադրվել են ՁԵՑ-ում,
- 24 ՓՄՁ սուբյեկտների կողմից ուղարկվել են 79 հետաքրքրության առաջարկներ և ստացված կոնտակտները ներկայացվել են տեղական ընկերություններին,
- 44 հայաստանյան ՓՄՁ սուբյեկտների նկատմամբ ստացվել են 88 հետաքրքրության առաջարկներ և ներկայացվել են նշված ընկերությունների տվյալները,
- 45 ՓՄՁ սուբյեկտներ մասնակցել են բիզնեսի միջազգայնացման տեղեկատվական միջոցառումներին,
- 7 ՓՄՁ սուբյեկտներ հայ-ռումինական գործարար համագործակցության ընթացքում ներկայացվել են ռումինական ընկերությունների,
- 32 ՓՄՁ սուբյեկտներ մասնակցել են միջազգային միջոցառման արտերկրում,
- 18 ընկերություններ մասնակցել են «Արտադրված է Հայաստանում» ցուցահանդեսին,

- 4 ընկերություններ կնքել են համագործակցության հաստատման համաձայնագիր:

8.2 ՓՄՁ միջազգայնացմանն աջակցություն այլ միջոցառումներ

Հայաստանում իր գործունեությունը ծավալած **Գերմանիայի տնտեսագիտական միության** հետ համագործակցության շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կողմից աջակցություն է ցուցաբերվել Գերմանիայում հայ գործարարների գործարար կապերի հաստատման ուղղությամբ: Մշակվել և շուրջ 3000 գործարարների շրջանում տարածվել է հայ-գերմանական 4 եռամսյակային գործարար տեղեկաթերթ, որը ներառում է գործարար համագործակցության առաջարկներ գերմանական ընկերությունների կողմից, օգտակար տեղեկատվություն հայ-գերմանական գործարար միջավայրի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկատվություն՝ Հայաստանում Գերմանիայի տնտեսագիտական միության մասին:

Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը, Երևանի առևտրաարդյունաբերական պալատի հետ համագործակցության շրջանակներում, ս.թ. մարտի 1-5-ը մասնակցել է հայ-բելառուսական գործարար հանդիպումների կազմակերպմանը: Հանդիպմանը Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ աջակցությամբ մասնակցում էին 5 հայաստանյան գործարարներ, որոնցից 2-ը, ըստ նախնական տեղեկությունների, ձեռք են բերել պայմանավորվածություն հետագա համագործակցության վերաբերյալ:

Ս.թ. մարտի 17-21-ը Երևանի առևտրաարդյունաբերական պալատի հետ համագործակցությամբ Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը հանդես է եկել է իբրև Ռուսաստանի Դաշնության Սվերդլովսկի տարածաշրջանից ժամանող ընկերությունների գործարար համագործակցության միջոցառումների համակազմակերպիչ: Հանդիպմանը Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ աջակցությամբ մասնակցել են 2 հայկական ընկերություն, որոնցից 1-ը ձեռք է բերել պայմանավորվածություն՝ հետագա համագործակցության վերաբերյալ:

2015թ. մարտի 23-25-ը «Հայաստան-Լիտվա» գործարար համաժողովի շրջանակներում տեղի են ունեցել գործարար համագործակցության հաստատման միջոցառումներ: Միջոցառումը կազմակերպվել էր Հայաստանի Զարգացման Հիմնադրամի կողմից: Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի աջակցությամբ միջոցառմանը մասնակցել են 5 ընկերություններ: Միջոցառման արդյունքում ձեռք են բերվել համագործակցության համաձայնություններ:

Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը Երևանի առևտրաարդյունաբերական պալատի հետ համագործակցության շրջանակներում ս.թ. ապրիլի 30-ին աջակցել է Սանկտ-Պետերբուրգից, իսկ ս.թ. մայիսի 20-ին՝ Ղազախստանից ժամանած ընկերությունների հետ գործարար համագործակցության միջոցառումների կազմակերպմանը: Հանդիպումներին Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի աջակցությամբ մասնակցել են համապատասխանաբար 4 և 2 հայկական ընկերություններ:

Ս.թ. հունիսի 15-ին «Հայաստան-Լիտվա» գործարար համաժողովի շրջանակներում, Երևանի առևտրաարդյունաբերական պալատի հետ համագործակցությամբ, Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը աջակցել է Լիտվայից ժամանած ընկերությունների հետ գործարար համագործակցության միջոցառումների կազմակերպմանը: Հանդիպմանը Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի աջակցությամբ մասնակցել են 6 հայկական ընկերություններ:

Ս.թ. հունիսի 30-ին Երևանի առևտրաարդյունաբերական պալատի հետ համագործակցության շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը աջակցել է Օմսկի

տարածաշրջանից ժամանած ընկերությունների հետ գործարար համագործակցության միջոցառումների կազմակերպմանը: Հանդիպմանը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի աջակցությամբ մասնակցել են 5 հայկական ընկերություններ:

Ս.թ սեպտեմբերի 19-ին Երևանի առևտրաարդյունաբերական պալատի հետ համագործակցության շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը աջակցել է Ուլյանովսկի տարածաշրջանից ժամանած ընկերությունների գործարար համագործակցության միջոցառումների կազմակերպմանը, որի շրջանակներում հայկական չրագործները և այլ ոլորտի գործարարներ հանդիպեցին Ուլյանովսկի տարածաշրջանային ինտեգրացված կենտրոնի ղեկավարի հետ: Հանդիպումների ընթացքում 5 հայկական ընկերությունների ներկայացուցիչներ ներկայացրեցին իրենց ընկերությունների գործունեությունը, ինչպես նաև փոխանակեցին կոնտակտներ՝ հետագայում Ուլյանովսկի տարածաշրջանի գործարարների հետ համագործակցության ակնկալիքով:

Ընդհանուր առմամբ, վերը նշված միջոցառումներին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ աջակցությամբ մասնակցել են **34 ՓՄՁ սուբյեկտներ**:

«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2015 թվականի ծրագրով «Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:

9. Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ ոլորտի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում

ՓՄՁ պետական աջակցության ծրագրային ուղղություններով նախատեսված միջոցառումների ընդլայնման և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման նպատակով 2015 թվականի ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը շարունակել է համատեղ ծրագրեր մշակել և իրականացնել մի շարք միջազգային կազմակերպությունների հետ, ինչպես նաև համագործակցություն է հաստատել նոր կազմակերպությունների հետ:

Առանձին ծրագրերի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները ներկայացվում են ստորև.

ա) ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացնող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագիր

Հաշվետու ժամանակահատվածում Ծրագրի **«Տեղական տնտեսական զարգացում» բաղադրիչների** շրջանակում տնտեսության մասնակցային գնահատումներ են իրականացվել 9 համայնքային խմբերում (կլաստեր), որտեղ ընդգրկվել են 33 համայնքներ: Բացահայտվել են համայնքների տնտեսական զարգացման հեռանկարները և նախաձեռնությունները, որոնք ամփոփվել են համապատասխան հաշվետվություններում (մանրամասները ներկայացված են 5-րդ բաժնում):

Կատարված վերլուծությունները հիմք են ծառայել Օրագրի թիրախային համայնքներում տնտեսական զարգացման մի շարք այլ միջոցառումների իրականացման համար: Մասնավորապես, իրականացվել են «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության» 8 ծրագրեր (մանրամասները ներկայացված են 2-րդ բաժնում):

Օրագրի համար թիրախային ոլորտներ են ճանաչվել պանրագործությունը, չրերի արտադրությունը, ջերմոցային տնտեսությունները, սառնարանային տնտեսությունները և հյուրատնային բիզնեսը: Նշված ոլորտների զարգացման նպատակով, կախված պահանջարկից, կազմակերպվել են նաև տեխնոլոգիական դասընթացներ: 2015թ.-ի հունվարի 29-30-ը Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) նախաձեռնությամբ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի հետ համատեղ կայացել է վերապատրաստման դասընթաց՝ սննդի արտադրության ոլորտում գործող ընկերությունների համար: Դասընթացը վերաբերում էր սննդի անվտանգության կառավարման համակարգի ինքնուրույն ներդրմանը: Դասընթացին ապահովվել է 13 ՓՄՁ սուբյեկտների մասնակցությունը (HACCP, ISO 22000, FSSC 22000): Հաշվետու ժամանակահատվածում տեխնոլոգիական դասընթացներ են կազմակերպվել և անհատական խորհրդատվություն է տրամադրվել նաև ՀՀ Տավուշի մարզի ջերմոցային տնտեսություններին, ՀՀ Կոտայքի և Արմավիրի մարզերի սառնարանային տնտեսություններին և չրագործներին: Բացի այդ, Օրագրի շրջանակներում մշակվել է ջերմատնային տնտեսություն հիմնելու և շահագործելու վերաբերյալ ձեռնարկ, որը պետք է հնարավորություն տա սկսնակ գործարարներին պատկերացում կազմել ջերմատնային տնտեսություն հիմնելու և շահագործելու համար անհրաժեշտ տեխնիկական, տեխնոլոգիական ու տնտեսական ասպեկտների վերաբերյալ: Ձեռնարկի պաշտոնական շնորհանդեսը տեղի է ունեցել ս.թ. նոյեմբերի 27-ին (մանրամասները ներկայացված են 6-րդ բաժնում):

Նպատակ ունենալով բարձրացնել ՓՄՁ սուբյեկտների մրցունակությունն ու կենսունակությունը՝ Օրագրի շրջանակներում նախատեսվում է դրամաշնորհների տրամադրում՝ նյութեր և/կամ սարքավորումները ձեռք բերելու և շահառուին տրամադրելու միջոցով: Հաշվետու ժամանակահատվածում 7 ՓՄՁ սուբյեկտներ սարքավորումների/նյութերի ձևով ստացել են դրամաշնորհներ (*Հավելված 5.2*):

Օրագրի թիրախ համայնքներում գործող ձեռնարկությունների համար շուկաների հասանելիության ապահովման ենթաբաղադրիչի շրջանակներում ս.թ. ապրիլի 25-27-ին կայացած «Արտադրված է Հայաստանում» ցուցահանդեսին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ներկայացել է առանձին տաղավարով: «3 սերունդ» նախաձեռնության նպատակն է, որպեսզի հայի 3 սերունդը՝ պապը, զավակը և թոռնիկը մնան և արարեն հայրենիքում: Տաղավարում իրենց արտադրանքն էին ներկայացրել 8 արտադրող Հայաստանի մարզերից (Ճիր, ձիթապտուղ, ապխտած պանրի տեսականի, այծի, հոլանդական պանիր, խմորեղեն, քաղցրավենիք, սոճու կոնեթից մուրաբա և մեղր, գետնանուշ): ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանն «Արտադրված է Հայաստանում» ցուցահանդես կատարած այցի շրջանակում այցելեց նաև «3 սերունդ» նախաձեռնության տաղավար: Նախագահը ծանոթացավ ներակայացված 8 արտադրատեսակներին, զրուցեց արտադրողների հետ: Սերժ Սարգսյանը հետաքրքրվեց, թե ինչ ծավալի արտադրանք է յուրաքանչյուր արտադրող վաճառում շուկայում և արտահանման ինչ հնարավորություններ և ներուժ ունի նրանցից յուրաքանչյուրը:

«Փոքր ենթակառուցվածքների զարգացում» բաղադրիչի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ավարտվել են 13 ենթակառուցվածքային ծրագրեր ՀՀ Տավուշի, Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերում (մանրամասները ներկայացված են 5-րդ բաժնում):

Նախագծային, շինարարական և տեխնիկական հսկողության աշխատանքներն իրականացվում են մրցութային կարգով ընտրված կազմակերպությունների միջոցով: Բոլոր ծրագրերի համար մշակվել են շրջակա միջավայրի կառավարման և մոնիտորինգի պլաններ (ՇՄԿՄՊ), որոնք ներկայացվում են կապալառուներին:

Նշված բաղադրիչի շրջանակներում Ծրագրի շրջանակներում «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնի» (ԱԳԶԿ) հետ համագործակցությամբ հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Արմավիրի մարզի Նորապատ և ՀՀ Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղական համայնքում հիմնվել են Գյուղատնտեսական սպասարկման կենտրոններ (ԳՄԿ): Կենտրոնների բացման արարողությունները տեղի են ունեցել համապատասխանաբար ս.թ. մայիսի 12-ին և հուլիսի 31-ին: Բացմանը ներկա են գտվել բարձրաստիճան պաշտոնյաներ, ԱՄՆ դեսպանը, աշխատակիցներ, ֆերմերներ: Նոր ստեղծված Կենտրոնները նպաստելու են առաջադեմ տեխնոլոգիաների և ֆերմերային գործարարության զարգացման փորձի տարածմանը և առաջխաղացմանը: Կենտրոնները դառնալու են կարևոր կառույցներ ինստիտուցիոնալ և մարդկային կարողությունների ամրապնդման առումով, որոնք անհրաժեշտ են գյուղատնտեսական և այգեգործական ծառայությունների մատուցման լավագույն փորձի լայն կիրառման համար: Կենտրոնները նաև կապահովեն այգեգործական պարագաների, գյուղատնտեսական գործիքների, ինչպես նաև նորագույն տեխնոլոգիաների, գյուղատնտեսական արտադրանքի և շուկաների վերաբերյալ արդիական տեղեկատվության տրամադրում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ևս երկու անասնաբուժական ֆերմերային կենտրոնների հիմնում ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավան համայնքում և ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գյուղ համայնքում: Ներկայումս ընթացքի մեջ են շինարարական աշխատանքները:

«Գյուղական համայնքների բնության պահպանություն» բաղադրիչի շրջանակներում կայուն զարգացում ապահովելու նպատակով աջակցություն է ցուցաբերվում աղետակայուն համայնքների ձևավորմանը, որոնք իրենց զարգացման պլաններում կձեռնարկեն քայլեր ռիսկերի կառավարման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում աղետների ռիսկերի նվազեցման (ԱՌՆ) վերլուծություններ են իրականացվել Ծրագրի թիրախային 20 գյուղական համայնքներում: Վերլուծության հետ միասին համայնքին է հանձնվում նաև իրենց համայնքի աղետների ռիսկերի կառավարման հավաստագիրը:

Բաղադրիչի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվելու նաև բացասական ազդեցության տակ գտնվող համայնքներին՝ բնապահպանական ծրագրերի մշակման ու իրականացման գործընթացում: Բացասական ազդեցության տակ գտնվող համայնքներն ունեն հնարավորություն բնապահպանական ծրագրերի իրականացման համար պետական բյուջեից ստանալու նպատակային հատկացումներ, որոնք առաջանում են տվյալ համայնքներում ձեռնարկությունների բնապահպանական վճարներից: Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են ՀՀ Լոռու մարզի Ախթալա և Սյունիքի մարզի Քաջարան համայնքները: Երկու նշված համայնքների համար Ծրագրի աջակցությամբ

մշակվել և Հայաստանի պետ բյուջե ներկայացվել են ծրագրային առաջարկներ, միաժամանակ Ծրագրի համաֆինանսավորման հետ:

- Ախթալա քաղաքում Աբովյան և Շահումյան փողոցների ասֆալտապատման աշխատանքների իրականացում՝ օգտագործելով 2016թ. պետական բյուջեից սուբվենցիաների տեսքով հատկացվող գումարները, իսկ Ծրագրի միջոցների հաշվին՝ նշված փողոցների խաչմերուկում կանաչ գոտու հիմնադրման աշխատանքները: Միաժամանակ նշենք, որ նշված ծրագրի իրականացմանն աջակցելու պատրաստակամություն են հայտնել նաև ԱՄՆ ՄԶԳ «Գյուղի զարգացման արդի նախաձեռնություն»/ARDI ծրագիրը և «ՀԿ կենտրոնը»: Կանաչ գոտու/պուրակի հիմնադրման աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2016 ապրիլ ամսվա ընթացքում:
- Քաջարան համայնքում կիրականացվի բնապահպանական իրազեկման քարոզարշավ՝ համայնքում պլաստիկ թափոնների հավաքման, կենցաղային աղբի տեսակավորման, պլաստիկ թափոնների շրջակա միջավայրի վրա վնասի հասցման և դրանց վերամշակման հնարավորությունների վերաբերյալ՝ օգտագործելով 2016թ. պետական բյուջեից սուբվենցիաների տեսքով հատկացվող գումարները: Ծրագրի կողմից Քաջարան համայնքի համար կգնվեն և կտեղափոխվեն մոտ 30 հատ հատուկ պլաստիկ թափոնների հավաքման համար նախատեսված կոնտեյներներ, որոնք համայնքը կտեղադրի հասարակական վայրերում և կենցաղային աղբի հավաքման համար նախատեսված կոնտեյներների մոտ:

**բ) «Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջնություն»
Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ/ՃՄՀԳ համատեղ ծրագիր**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շրջանակներում հայտարարվել է մրցույթ Տավուշի մարզում «Ձիթապտղի վերամշակման ուսումնասարտադրական կենտրոնի» ստեղծման փորձնական ծրագրի իրականացման նպատակով տեղական գործընկերոջ ընտրության համար, որը կապահովի ուսումնասարտադրական կենտրոնի բնականոն աշխատանքը և կզբաղվի արտադրանքի առաջնության գործողություններով: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությանը տրամադրվել են ձիթապտղի վերամշակման ուսումնասարտադրական կենտրոնի համար անհրաժեշտ սարքավորումները, Ծրագրի աջակցությամբ մշակված ձիթապտղի հիմնական ապրանքանիշը, լոգոտիպը և ձևավորված պիտակները:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շրջանակներում հայտարարվել է մրցույթ Արարատի մարզում «Կարմիր պղպեղի, բուսական համեմունքների և չրերի ուսումնասարտադրական կենտրոնի» ստեղծման փորձնական ծրագրի իրականացման նպատակով տեղական գործընկերոջ ընտրության համար, որը կապահովի ուսումնասարտադրական կենտրոնի բնականոն աշխատանքը և կզբաղվի արտադրանքի առաջնության գործողություններով: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությանը տրամադրվել են ուսումնասարտադրական կենտրոնի համար անհրաժեշտ սարքավորումների մի մասը, որը համալրվել է տեղական գործընկերոջ կողմից: Ուսումնասարտադրական կենտրոնը պատրաստ է շահագործման և արդեն

կազմակերպել է չրագործների առաջին դասընթացը (քսանհինգ մասնակից Արարատի, Արմավիրի և Սյունիքի մարզերից): Ներկայումս ընթանում են կենտրոնի համար ապրանքանիշի և փաթեթավորման ձևավորման աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտել հաջորդ հաշվետու ժամանակահատվածում:

Ծրագրի շրջանակներում հայտարարվել է մրցույթ Սյունիքի մարզում «Պանրի ուսումնասիրտադրական կենտրոնի» ստեղծման փորձնական ծրագրի իրականացման նպատակով տեղական գործընկերոջ ընտրության համար, որը կապահովի ուսումնասիրտադրական կենտրոնի բնականոն աշխատանքը և կգրադվի արտադրանքի առաջնական գործողություններով: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությանը տրամադրվել են ուսումնասիրտադրական կենտրոնի համար անհրաժեշտ սարքավորումների մի մասը, որը պետք է համալրվի տեղական գործընկերոջ կողմից: Ուսումնասիրտադրական կենտրոնի սարքավորման և կարգաբերման աշխատանքները նախատեսվում է ավարտել հաջորդ եռամսյակի ընթացքում:

Ծրագրի միջոցներով ձեռք են բերվել 20 (քսան) ցուցահանդեսային տաղավարներ, որոնց միջոցով Հայաստանում կազմակերպվող տարատեսակ փառատոնների շրջանակներում անվճար հիմունքներով այցելուներին կներկայացվեն Ծրագրի և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի շահառու հանդիսացող այլ ՓՄՁ-ների արտադրանքը և ծառայությունները:

Ծրագրի միջոցներով ձեռք են բերվել 11 ցուցափեղկ սառնարաններ, որոնք որպես դրամաշնորհ տրամադրվել են Սյունիքի մարզի Հալիձոր և Տաթև գյուղերում զբոսաշրջային ծառայություններ (հիմնականում հյուրատներ և ճամբարային հանգստի գոտիներ) մատուցող ՓՄՁ-ների՝ իրենց հյուրերին տեղական արտադրանքի պատշաճ և անվտանգ ներկայացման նպատակով, ինչպես նաև ձեռք են բերվել 8 վակուումային փաթեթավորման սարքավորումներ, որոնցից 7-ը որպես դրամաշնորհ տրամադրվել են Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Լոռու և Սյունիքի մարզերում չրերի ու պանրի արտադրությամբ զբաղվող ՓՄՁ-ների՝ իրենց արտադրանքի պատշաճ և անվտանգ փաթեթավորման համար (*Հավելված 5.2*):

Հաշվետու ժամանակահատվածում Վայոց Ձորի մարզի Զիվա և Ռինդ համայնքներում Ծրագրի միջոցներով իրականացվել են տարածաշրջանում հյուրատնային բիզնեսի և գյուղմթերքների վերամշակման ներուժի բացահայտման վերլուծական աշխատանքներ: Վերլուծության հաշվետվությունների ամփոփումից հետո որոշվել է շարունակել համայնքում տարվող աշխատանքները համայնքներում առավել ակտիվ գործարարների հետ անհատական աջակցությունների միջոցով:

Ծրագրի ֆինանսավորմամբ ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքում իրականացվել է «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագիր՝ զբոսաշրջային ծառայությունների զարգացման ուղղվածությամբ, ինչպես նաև մեկնարկել է «Կոտայքի մարզի Բջնի գյուղում գյուղական տուրիզմի համալիր զարգացման» փորձնական ծրագիրը, որն իրականացվում է ՄԱԶԾ հետ համատեղ: Վերլուծական աշխատանքների ավարտից հետո համայնքում իրականացվել է «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագիր՝ զբոսաշրջային ծառայությունների զարգացման և գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման ուղղվածություններով: Դասընթացի մասնակիցների թիվը կազմել է 14 (տասնչորս), որից գործարար ծրագրեր են մշակել և

ներկայացրել 12 (տասներկու) մասնակից: Ֆինանսական աջակցություն տրամադրելու որոշում է կայացվել 6 (վեց) մասնակցի համար:

Ծրագրի ֆինանսավորմամբ ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկ քաղաքում կազմակերպվել և իրականացվել է «Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցություն» ծրագիր՝ զբոսաշրջային ծառայությունների զարգացման ուղղվածությամբ: Ծրագրին մասնակիցների թիվը կազմել է 13 (տասներեք), որից գործարար ծրագրեր են մշակել և ներկայացրել 12 (տասներկու) մասնակից: Ֆինանսական աջակցություն տրամադրելու որոշում է կայացվել 8 (ութ) մասնակցի համար:

Ծրագրի շրջանակներում հրատարակվել են փոքր և միջին ձեռնարկատիրությունների, ինչպես նաև ոլորտում կրթական գործունեություն իրականացնող դասընթացավարների համար նախատեսված հետևյալ կրթական նյութեր, որոնք մշակվել են ճապոնացի փորձագետների կողմից.

- «ԿԱՅՁԵՆ գործիքներ» ուսումնական ձեռնարկ,
- «Թույլ տվեք, որ Ձեր պատմությունը վաճառի» փոքր բիզնեսի ապրանքանշման և մերչանդայզինգի արագ ուղեցույց:

Ծրագրի կողմից 1000 օրինակով վերահրատարակվել է 2009թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ՅՈՒՆԵՍԿՈ-ի հետ համատեղ մշակված և հրատարակված «Հայաստանի Լոռու մարզի գանձերը ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային ժառանգության ցուցակում» գրքույկը անգլերեն լեզվով, որը նախատեսված է Հայաստան այցելող արտասահմանցի զբոսաշրջիկների համար:

Ծրագրի փորձագետների կողմից սկսվել է խանութի տիպի շուկայավարման հարթակ հանդիսացող ճամփեզրյա կայանների ստեղծման և կառավարման հայեցակարգի մշակումը: Հայեցակարգի միջոցով պետք է ներկայացվեն նմանատիպ կայանների գործունեության և կառավարման ընդհանուր սկզբունքները և Հայաստանում դրա տեղայնացման և կիրառման հնարավորությունները:

Ծրագրի փորձագետների կողմից մշակվել են «Շուկայավարման հարթակների ձեռնարկ» և «OVOP Casebook» նյութերը: Առաջին գրքույկում պարունակում են շուկայավարման հարթակների ստեղծման և կառավարման վերաբերյալ տեղեկատվություն և խորհուրդներ, իսկ երկրորդում ներկայացված են հայկական «Մեկ գյուղ, մեկ արտադրանք» հայեցակարգի կիրառման պրակտիկ օրինակները:

Պարբերաբար թարմացվել է «OVOP Armenia» ֆեյսբուքյան էջի բովանդակությունը, որը ներկայումս ունի 3000-ից ավելի հետևողներ: Էջը օգտագործվում է որպես ոչ շոշափելի շուկայավարման հարթակ, որտեղ ներկայացվում են Ծրագրի շահառու հանդիսացող կազմակերպությունների արտադրանքը/ծառայությունները, Ծրագրի փորձագիտական թիմի կողմից մշակված կրթական նյութերը, ինչպես նաև տարածվում է տեղեկատվություն Ծրագրի գործունեության վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում ամփոփվել են նաև հյուրատնային ծառայությունների վերաբերյալ շուկայի ուսումնասիրությունների արդյունքները, որը կատարվում է նաև Ծրագրի ֆեյսբուքյան էջի միջոցով: Արդյունքների հայերեն ամփոփագիրը ներկայացվելու է Ծրագրի ֆեյսբուքյան էջի միջոցով:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի փորձագիտական խմբի կողմից աշխատանքներ են տարվել հայկական ապրանքների՝ Ճապոնիա արտահանման ներուժի բացահայտման ուղղությամբ: Մասնավորապես, Ծրագրի միջոցներով Ճապոնիայում

պեստիցիդների մնացորդների լաբորատոր փորձաքննության են ներկայացվել հայկական 3 (երեք) ընկերությունների 3 (երեք) տեսակի չրեր, իսկ ակոհոլային խմիչքների ներմուծմամբ և առևտրով զբաղվող ընկերություններին են տրամադրվել հայկական ակոհոլային խմիչքներ արտադրող 8 (ութ) ընկերությունների արտադրանքի թվով 11 (տասնմեկ) նմուշներ (գինի և բրենդի):

Արտահանման ներուժի բացահայտման գործողությունների շրջանակում տեղական զբոսաշրջային ընկերության հետ համագործակցությամբ Ծրագրի փորձագիտական թիմը ներկայումս մշակում է զբոսաշրջային փաթեթներ, որոնք ներառում են ծրագրի շահառու հանդիսացող հյուրատների ծառայությունները: Փաթեթները նախատեսվում է ներկայացնել Ճապոնիայում արտագնա զբոսաշրջության մեջ մասնագիտացված ընկերությունների՝ Հայաստան նոր զբոսաշրջիկներ ներգրավելու նպատակով:

Կարողությունների զարգացման նպատակով ս.թ. մայիսի 26-ից հունիսի 6-ը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և գործընկեր այլ կազմակերպությունների 8 ներկայացուցիչներ մասնակցել են Ճապոնիայում իրականացված վերապատրաստման դասընթացի՝ «Տեղական ապրանքների շուկայավարման ճապոնական մեթոդներ և հայկական OVOP հայեցակարգ» թեմայով: Ծրագրի միջոցներով Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի շահառու հանդիսացող չրի արտադրությամբ զբաղվող գործարարների արտադրանքի նմուշները ներկայացվել են Ճապոնիայում չրերի ներմուծմամբ և վաճառքով զբաղվող ընկերություններին՝ գնահատելու համար հայկական չրի որակական և համային հատկանիշները, ճապոնական շուկայում (որպես բարձր չափորոշիչներ կիրառող շուկա) վաճառքի ներուժը: Հայկական չրերի վերաբերյալ նրանց դիտողությունները և առաջարկները հայկական կողմին ներկայացվել են վերապատրաստման դասընթացի ժամանակ:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի աշխատակիցների և գործընկեր գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների ներկայացուցիչների կարողությունների զարգացման նպատակով ս.թ. նոյեմբերի 3-4-ին կազմակերպվել է «Հայկական OVOP հայեցակարգ» դասընթացավարների վերջնական դասընթաց: Դասընթացին մասնակցել են 21 (քսանմեկ) հոգի:

Ս.թ. հոկտեմբերի 13-30-ը ՃՄՀԳ անկախ փորձագետների խումբն իրականացրել է Ծրագրի գործունեության գնահատում: Համաձայն գնահատման հաշվետվության՝ Ծրագիրը ստացել է միայն «հարաբերականորեն բարձր» և «բարձր» գնահատականներ, ինչը եզակի երևույթ է ՃՄՀԳ նմանատիպ ծրագրերի իրականացման համաշխարհային պրակտիկայում:

Հաշվետու ժամանակահատվածում Ծրագրի շարունակության ապահովման նպատակով մշակվել և ճապոնական կողմին է ներկայացվել Ծրագրի երկրորդ փուլի իրականացման առաջարկ: Առաջարկը գտնվում է ճապոնական կողմում՝ քննարկումների փուլում:

գ) Սևծովյան ավազանի երկրների 2007-2013 թվականների համատեղ գործողությունների ծրագիր

1. «Տեղական/տարածաշրջանային տնտեսական զարգացման ցանցը՝ որպես որոշիչ գործոն Սևծովյան տարածաշրջանում մրցակցության խթանման համար» (LRED Net)

Ծրագիրը պաշտոնապես մեկնարկել է 2013թ. հուլիսի 1-ից և ավարտվել է 2015թ. հունիսի 30-ին: Ծրագրի ընդհանուր համակարգում իրականացվում էր Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից: Մասնակից երկրներն են՝ Հունաստանը, Վրաստանը, Բուլղարիան և Մոլդովան: Ծրագրի նպատակն էր ուսումնասիրել մասնակից երկրների տեղական տնտեսական զարգացման (SSQ) նախաձեռնությունները, առկա ծրագրերն ու գործիքները, ապահովել փորձի և գիտելիքների փոխանակում SSQ ծրագրերի վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ միջոցառումները. 2015թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում ծրագրի շրջանակներում կայացել է մեկօրյա ազգային աշխատանքային հանդիպում Մոլդովայի մայրաքաղաք Քիշնևում, ինչպես նաև ղեկավար անձանց հանդիպում՝ Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում: Հանդիպումների ընթացքում քննարկվել են ծրագրային մի շարք հարցեր:

Երևանում ս.թ. մարտի 30-ին կայացած ազգային աշխատանքային հանդիպման ընթացքում քննարկվել են ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր գործընկերոջ կողմից իրականացված PACA վարժությունների արդյունքում հայտնաբերված անդրսահմանային համագործակցության նախաձեռնությունները: Բացի այդ, հայտնաբերված նախաձեռնությունների համատեքստում, ծրագրի շահառուների միջև ստորագրվեցին փոխըմբռնման հուշագրեր, ինչպես նաև հայտարարագրեր:

Ծրագրի մասնակից կազմակերպությունների կողմից իրականացված PACA վարժությունների արդյունքները հրապարակվել են յուրաքանչյուր գործընկերոջ կողմից տպագրված բուլլետեններում, որոնց համախմբված տարբերակը մինչև ծրագրի ավարտը կհրապարակվի և կտարածվի շահառուների միջև:

Ս/թ մայիսի 26-27-ին ծրագրի շրջանակներում Հունաստանի Կատերինի քաղաքում կայացել է ներդրումային համաժողով: Համաժողովին մասնակցել են յուրաքանչյուր գործընկեր երկրից 5-ական ՓՄՁ սուբյեկտներ: Համաժողովի շրջանակներում տեղի են ունեցել նաև գործարար հանդիպումներ Հայաստանի, Հունաստանի, Վրաստանի, Մոլդովայի և Բուլղարիայի ՓՄՁ սուբյեկտների միջև: Հանդիպումների արդյունքում վերհանվել են անդր-սահմանային նախաձեռնությունները:

Հունիսի 22-ին Երևանում տեղի ունեցավ ծրագրի ղեկավար անձանց ավարտական հանդիպումը, որին մասնակցում էին ծրագրի գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչները: Հանդիպումը զուգորդվեց մամուլի ասուլիսով, որի ընթացքում հանրությանը ներկայացվեցին ծրագրի արդյունքները: Այս հանդիպման ընթացքում ստորագրվեց նաև ծրագրի ավարտից հետո 1 տարի ժամանակահատվածն ընդգրկող իրականացման ծրագիր, որում արտացոլված են այն գործողությունները, որ պետք է իրականացվեն գործընկերների կողմից՝ ծրագրի ավարտից հետո 1 տարի ժամանակահատվածում հետագա առևտրային կապերի զարգացման նպատակով:

2. «Տարածաշրջանային բիզնես ինկուբատորների ցանց» (Black Sea BI-Net) ծրագիր

Ծրագիրը սկսվել է 2013 թվականի մարտի 26-ին և ավարտվել է 2015թ. մարտի 27-ին:

Ծրագրի նպատակն էր ուսումնասիրել և ներդնել ծրագրի մասնակից երկրների փորձը բիզնես ինկուբատորների ստեղծման և կառավարման բնագավառում, ստեղծել ինկուբատորների տարածաշրջանային ցանց: Ծրագրի համակարգողն էր Մոլդովայի ՓՄՁ զարգացման գործակալությունը (ODIMM), մասնակից երկրներն են՝ Հունաստանը, Ռումինիան, Հայաստանը, Ուկրաինան և Թուրքիան:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

Ս.թ. փետրվարի 2-5-ը ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից կազմակերպվել էր դասընթաց՝ նվիրված բիզնեսի միջազգայնացման հարցերին, որին մասնակցել են 25 ՓՄՁ սուբյեկտի ներկայացուցիչներ: Դասընթացի մասնակիցներին ներկայացվել են հետևյալ թեմաները.

- Համառոտ պատմական և տնտեսական ակնարկ Եվրոպական միության ստեղծման նպատակի, անցած ճանապարհի և ներկայիս քաղաքական/տնտեսական միջավայրի վերաբերյալ,

- ՀՀ հիմնական համագործակցությունը ԵՄ հետ, ԵՄ արտոնությունների ընդհանրացված համակարգ (GSP+),

- Հայաստանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը,

- ՀՀ արտահանման ընթացակարգեր, պահանջվող փաստաթղթերի, պատրաստում, մաքսային ձևակերպումներ, արտահանում, ապրանքների ժամանում ԵՄ, մաքսային ձևակերպումներ,

- Ձեռնարկությունների եվրոպական ցանցը և նրա գործունեությունը Հայաստանում:

Ծրագրի շրջանակներում ս.թ. մարտի 5-7-ը Մոլդովայի Քիշնև, և մարտի 15-19-ը Ռումինիայի Տուլչեա և Կոնստանտա քաղաքներում կազմակերպվել են 2 ուսումնական այց, որոնց ընթացքում մասնակիցներին ներակայացվել է բիզնես ինկուբատորների ստեղծման և զարգացման մոլդովական և ռումինական փորձը, այցելություններ են կազմակերպվել գործող բիզնես ինկուբատորներ:

Ներկայումս, հիմնվելով կատարված աշխատանքի արդյունքների և ձևավորված ինկուբատորների ցանցի վրա, ծրագրի գործընկերների հետ համատեղ աշխատանքներ էր իրականացվում այս ուղղությամբ հետագայում համագործակցությունը խորացնելու և նոր նախաձեռնություններ մեկնարկելու ուղղությամբ:

դ) «Ձեռնարկատիրական աշխատանք Հայաստանի երիտասարդության համար» ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO)/Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի համատեղ ծրագիր

Ծրագրի շրջանակներում ընտրված երիտասարդ գործարարներին տեխնիկական և ֆինանսական աջակցությունը տրամադրվում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից արդեն իսկ փորձարկված մեթոդների և գործիքների միջոցով, ներառյալ՝ ձեռնարկատիրական հմտությունների զարգացման դասընթացներ, գործարար ծրագրերի մշակում, անհատական խորհրդատվություններ, վարկային երաշխավորությունների տրամադրում առավել իրատեսական գնահատված ծրագրերին և այլն:

Ծրագրի ընթացքում նախատեսվում է իրականացնել **25** «Սկսնակ գործարարների աջակցության ծրագրեր» շուրջ **300 սկսնակ երիտասարդ գործարարների**

մասնակցությամբ և արդյունքում ունենալ առնվազն **80** ֆինանսավորված գործարար ծրագրեր:

Ծրագրի ընդհանուր տևողությունը 44 ամիս է: Ծրագրի ֆինանսավորումը իրականացվում է Ավստրիայի կառավարության կողմից:

Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են երիտասարդների մասնակցությամբ «Սկսնակ գործարարների աջակցության» 5 ծրագրեր (մանրամասները ներկայացված են 2-րդ բաժնում):

10. Աջակցության այլ ծրագրեր

ա) Գյուղատնտեսական տեխնիկայի և հարակից սարքավորումների ձեռքբերմանն աջակցության ծրագիր

Համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 20-ի N 650-Ն որոշման՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը 2015 թվականին կնքել է պայմանագրեր Բելառուսի Հանրապետության «Մինսկի տրակտորների գործարան»-ի և Ռուսաստանի Դաշնության «Ռոստսելմաշ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ, կոմբայններ ու տրակտորներ ձեռք բերելու և ՀՀ քաղաքացիներին, համայնքներին ու կազմակերպություններին համապատասխան պայմաններով տրամադրելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում «Ռոստսելմաշ» ընկերությունից ներկրվել է ռուսական արտադրության «Նիվա Էֆֆեկտ» մակնիշի 8 հացահատիկահավաք կոմբայն, իսկ Մինսկի տրակտորների գործարանից՝ 4 հատ Բելառուս ՄՏՁ 82.1 մակնիշի տրակտոր: Վաճառվել է 26 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, որից 12-ը՝ բելառուսական MT3 82.1 մակնիշի տրակտոր, 6 հատ հացահատիկահավաք կոմբայն (*Հավելված 7*): Տրակտորներից երկուսը կառավարության համաֆինանսավորմամբ տրամադրվել է Արմավիրի մարզի Դալարիկ (4մլն. 50 հազար դրամ) և Շահումայն (8մլն. 100 հազար դրամ) համայնքներին:

Կոմբայնների դիմորդների ցանկ.

	Դիմորդ	Կարգավիճակ
1	Ծովինար համայնք-Գեղարքունիքի մարզ	Տրամադրված է
2	Վերին Կարմիրաղբյուր-Տավուշի մարզ	Տրամադրված է
3	Գնդևազ համայնք - Վայոց Ձորի մարզ	Տրամադրված է
4	Մաստարա համայնք – Արագածոտնի մարզ	Տրամադրված է
5	Սևքար/ Էղզար Հովհաննիսյան- Տավուշի մարզ	Տրամադրված է
6	Վարդաբլուր/ «Սերմնաբույծ» ՍՊԸ- Լոռու մարզ	Տրամադրված է

բ) «ՓՄՁ սուբյեկտների կողմից նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների ձեռքբերման արժեքի փոխհատուցում» ծրագիր

Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 11-ի N1017-Ն որոշման՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամին հատկացվել է 150,0 մլն ՀՀ դրամ գումար ՓՄՁ սուբյեկտների կողմից նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների ձեռքբերման արժեքի սուբսիդավորման նպատակով:

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 662-Ն և 2014 թվականի սեպտեմբերի 11-ի N1017-Ն որոշումներով՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից մշակվել է «ՓՄՁ սուբյեկտների կողմից նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների ձեռքբերման արժեքի փոխհատուցման կարգ», ըստ որի, որպես թիրախ ընտրվել են ՀՀ գյուղական համայնքների ՓՄՁ սուբյեկտներ, որոնց շրջանառությունը չի գերազանցում 10,0 մլն ՀՀ դրամը: Բացառության կարգով աջակցությունից կարող են օգտվել են ՀՀ մարզերի քաղաքային համայնքների առևտրի կազմակերպման կենտրոններում գործող ՓՄՁ սուբյեկտները:

2015 թվականի ընթացքում «ՓՄՁ սուբյեկտների կողմից նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների ձեռքբերման արժեքի փոխհատուցման» ծրագրի շրջանակներում սուբսիդավորվել է ՓՄՁ սուբյեկտների կողմից ներկայացված 611 հայտ: Սուբսիդավորման ընդհանուր գումարը կազմել է 21,610,000 ՀՀ դրամ (Հավելված 8):

11. **«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2015 թվականի ծրագիրն իրականացնող անձնակազմի և փորձագետների վարձատրությանը «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2015 թվականի ծրագրով» նախատեսված 152,300,000 ՀՀ դրամից ՀՀ պետական բյուջեից ուղղվել է 152,300,000 ՀՀ դրամ:**